

„Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL.

„Droschak”

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ԿՈՒԻՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ



ՄԱՐՑԻՐՈՍ ԶԱՐՈՒԽԶԵԱՆ

ՆԱՀԱՏԱԿԻԱԾ 1909 թ. ՓԵՏՐ. 7, ԹԱԻՐԻՋԻ ՄՕՏ, ԱԼԻԱՐԻ ԿՈՒՈՒՄ

ՄԱՐԺԻՐՈՍ ԶԱՐՈՒԽԶԵԱՆ

Կեանքեր են սրանք — Մարտիրոս, Կարո, Սէթօ և ուրիշներ — հազազհազ, գրաւիչ ու բեղմնաւոր կեանքեր՝ լի գաղափարական յոյզերով և յանդուգն թռիչքներով:

Մարտիրոսը — մանաւանդ: Որքան հարուստ ու արկածալի կեանք ունեցաւ Պարսկաստանի ազատութեան խորանին զոհաբերած այդ անսովոր երիտասարդը... Ինչպէս սպառնալից «Դրօշակի» մի յօդուածով... Ինչպէս կարողանալ գնահատել մի դէմք, որի էական բարեմասնութիւններն իսկ դեռ խուսափում են մեր ածապարող հայեացքից: Մարտիրոսները արժանի են ընդարձակ ու մանրազնին անալիզների, վերլուծումների. նրանց դէմքերն ու գործերը սպասում են վարպետ և իրազեկ կենսագրողների պաշարին ու համբերատար աշխատանքին: Առայժմ խօսքը «Յօդուածին» է. իսկ նա հարկադրաբար թերի է, կցկտուր, անբաւարար:

Հայ կեանքը վերջին տասնամեակների իր ելէջող ծփանքների մէջ արտադրեց և մշակեց մի տիպ, որ հարազատ և անհրաժեշտ ցոլքն է յեղափոխական մտքի ու իրականութեան: Դա տեղի ունեցաւ հաւանական տիպն է, առանց որի չի կատարուել ոչ մի ազգի յեղափոխութիւն, առանց որի չի յաղթանակել խիզախ, ըմբոստ փոքրամասնութեան անհաւասար պայքարը ընդդէմ հզոր բռնապետութիւնների:

Մարտիրոսը այդ տիպի լիակատար դրոշմն ունի, նրա հանդ ու ամբարիշտ ոգին և նրա հզոր ու մոլեգին թափը: Մարտիրոսը ինքը Տեղի ունեցաւ, նրա իսկական և խօլական ըմբռնումով: Ուժանակը նրա կուլտն է, ուսման ու ասորձանակը՝ նրա գուրգուրած զէնքերը: Նրանց զարհուրելի մթնոլորտի մէջ ապրում, շնչում է հերոսի հոգին, նրանցից գատաւ՝ յօրանջում է տաղտկանում, դժբախտանում: Տերօրը մերթ ընդ մերթ ընդլայնում է իր ճարակող ալիքները, վերածւում բացարձակ ճակատամարտի, և այդ դէպքերում հրացանը գալիս է փոխարինելու Մարտիրոսի ձեռքում ուսման ու ասորձանակին... փոխարինելու նոյնքան ձեռնահասութեամբ ու ճարակութեամբ: Հարւածը միշտ բախտաւոր է, նա գրեթէ երբեք չի վրիպում: Զարնում է նա հայ ժողովրդի բարձրապաշտօն դահլիճներին, դաւադրում է գեներալների ու նահանգապետների դէմ: Նետում է ֆանատիկոս ու վրէժխնդիր կատաղութեամբ հայաշինջ խուժանների վրայ, Բագրի՝ փողոցներում, նետում է, ի վերջոյ, կանոնաւոր պատերազմի մէջ ընդդէմ Իրանեան բռնապետութեան... և այդտեղ հերոսի բախտաւոր աստղը մի շարք փայլուն յաղթանակներից յետոյ, մէկէն իմէկ դաւաճանում է նրան՝ անկնկալ ու ցաւագին խաւարումով. այդ ուժեղ և անվրէպ բազուկը՝ անդամալուծւում է, այդ գեղեցիկ կորովը՝ խորտակւում...

Երբ 1905-ի փետրուարեան օրերում նախաին մայրաքաղաքի փողոցները ներկեցին հայկական առատահոս արիւնով, երբ իշխան Նախաշինքի և ամբողջ ցարական ոստիկանութեան սադրանքով ու աջակցութեամբ գազանացած խուժանը գրոհ տւեց հայ անպաշտպան ազգաբնակչութեան դէմ և երկու օր շարունակ թնդաւ ցնում էր մթնոլորտը դիւային օրգիաներով, յանկարծ այդ արիւնալի դժոխքի մէջ, ժողովրդային ծայրագոյն

յուսահատութեան ու լքման վայրկեանում երևան եկաւ, յայտնի չէ որտեղից, ազատարար հրեշտակի պէս, անձնւորների մի խումբ, որ մի կերպ խոյս տալով պոգրոմային ոստիկանութեան սրատես հայեացքից, զինւած ու դարանամուտ՝ սկսեց տեղալ գնդակների տարափը թշնամու վրայ և կարճ միջոցում իր շեշտակի և անողոք հարւածներով մահ ու աւերած սփոռեց յաղթական խուժանի մէջ, որ զարհուրած այդ անակնկալ հակահարւածից՝ փախուստի դիմեց:

Դ ու մ ան ի խումբն էր, Հին, մարդաւոր հրամանատարը՝ միշտ կամքոտ ու կորովի, միշտ հանդուրժեմ վճռական՝ խիզախեց դիմագրաւել իր մի բուռն զինւորներով ջարդի և աւերածի հսկայական ուրագանին և ցոյց տւեց ոչխարամիտ, թուլամորթ զանգաւաններին, թէ ինչ կարող է անել մի հատիկ մարդ, ինքնապաշտպանութեան ուրպիսի հրաշքներ կարող է գործել մի փոքրիկ խումբ, եթէ նա ունենայ ինքնիշխան, արիւնթիւն ու վճռականութիւն...

Ընդամենը 7 հոգի — Դումանի սպայակոյտը, Բայց ընտիր և յանդուգն կորիւններից՝ որ անվախ սլանում էին դէպի կուր ամենայորձանուտ հոսանքը, դէպի կրակ, դէպի մահ... Այդ անձնւոր եօթնակի մէջ էր Մարտիրոսը:

Խումբն աճեց արագ-արագ, սկզբնական կորիզը մեծացաւ, հայ ինքնապաշտպան բանակը դարձաւ հարկու պատերազմող կողմ, զոհերը գրեթէ հաւասարեցին և այդ ուժգին հակահարւածը մղեց շուտով անգիտակից ոստիկան դէպի զինադուլ ու «հաշտութիւն»...

Ուրագանն անցաւ, աւելի ճիշտ՝ ժամանակաւորապէս դադար առաւ: Կազմակերպութեան առջև ծառանում էր մի մեծ ու վտանգալի խնդիր. — պատժել ջարդի պատասխանատու հեղինակներին: Իշխան Նախաշինք — մահաւոր առաջին թեկնածուն: Իսկ հաջորդին դիմագրաւող կորիւններից երկուսը գրկում են ազատարար ու վրիժառու ուսմբերը և գնում են դարանակալ հետամտելու հայատեաց բորենուն: Երկու մեծ, ինտելիգենտ տերօրիստներ, երկու անբաժան ընկերակիցներ, մինը միւսից ճարպիկ, հնարագէտ և անվեհեր... Մէկը Մարտիրոսն է... Ընկերոջ հարւածն էր, որ գլորեց դահլիճին... Նախաշինքն ընկնում է արիւնաշաղաղ ու յօշոտւած՝ Բագրի սալայատակի վրայ, և «Դաշնակցութեան» այդ կարող ժեստը պայթում է շանթաբեր փոթորիկի պէս ամբողջ կովկասեան բիւրօկրատիայի վրայ, հիացմունք ու ցնծութիւն պատճառելով ազատութեան և ազգերի համերաշխութեան բոլոր բարեկամներին:

Կար մի ուրիշ վաժպիտ կովկասեան հօրիզոններում, որ սպասում էր յեղափոխականի վրէժխնդիր հարւածին: Դա գեներալ Ալիխան օվն էր, նորագոյն Ատտիլան, որ Երևանեան նահանգի մէջ հայկական պոգրոմները խրախուսելուց յետոյ, նետել էր իր գիշատիչ հօրդաներով Արաստանի ըմբոստ ազգաբնակչութեան վրայ և ծայրէծայր աւերել ու արիւնել այդ գեղեցիկ երկիրը:

Ո՞վ կարող էր որսալ այդ դժնդակ բռնաւորին, որի դէմ կատարւած կրկնակի մահափորձերը Արաստանի մէջ (վրաց յեղափոխականների կողմից) վիժել էին ցաւագինօրէն և որ այնուհետև դարձել էր ծայրայեղօրէն զգուշաւոր, միշտ շրջապատւած, գրեթէ անմատչելի...

Մարտիրոսը դարձեալ հրապարակ է նետում իր անբաժան ընկերակցի հետ... և մի գիշեր տարածում, Ալեքսանդրօպօլի փողոցում գնեցրալի սրարշաւ կառքը օդն է ցնդում երկու խօլական տերօրիստների միահամուռ հարածներին... Ալիսանօվի գզգզած մարմինը գնաց միանալու հակաշիճէի, Անդրէէփի, Բօգուսլափսկու, Բըկօփի և ուրիշ բազմաթիւ դահիճների շարանին, որոնց պատժել էր «Դաշնակցութիւնը» այն ծանր ու փոթորկալի տարիներում:

Այնուհետեւ Պարսկաստանում ենք տեսնում երիտասարդ ռազմիկին, յեղափոխութեան ու պատերազմի դաշտում: Մասնակցում է Մուսթուֆայի կռիւն, ուր 15—20 հոգուց բաղկացած մեր խումբը կռուում է ու քաջաբար դիմադրում Սեմաի խանի 1500 ձիաւորներին: Այդ յանդուգն ճակատամարտում—որի մասին հիացմունք է յայտնել ինքը Սեմաի խանը—մենք կորցրինք մեր թանկագին զինւորներին՝ Նիկօլին և Արտէմին:

Մուսթուֆայից — Սալմաստ: Մարտիրոսն այդտեղ դաշնակցական ուրիշ կամաւորների հետ դիմադրում է Իգօ խանի արշաւանքին, որ խոյը աւերելուց յետոյ, նետել էր Սալմաստի վրայ:

Սալմաստից — Թաւրիզ: Թաւրիզի բոլոր կռիւներին մասնակցում է Մարտիրոսը, միշտ առաջին շարքերում: Պաշարման սև օրերում, երբ հացի ու կենսական մթերքների սպառման շնորհիւ, հասարակութիւնը մատ-

նել էր լքման ու յուսահատութեան, յեղափոխական բանակը մտածեց յանդուգն մի թուխքով ճեղքել թշնամու շղթան և ճանապարհ բաց անել դէպի դուրս: Մօտ 1000 հոգի անցան Ալար և կռիւն սկսեց. պարսիկ յեղափոխականները մեծ մասամբ թողին շուտով կռիւ դաշտը, յետ քաշեցին մնաց Սատտար խանը իր մի խումբ հաւատարիմներով և մօտ 50 հոգուց բաղկացած մեր խումբը՝ Գեռիի ու Ռուստամի առաջնորդութեամբ: Գիշերը ժամը 3—4-ին մերոնք մի ուժգին գրոհ են տալիս դէպի թշնամին, որ չի կարողանում երկար դիմանալ և գիւղն աւերելուց յետոյ, յետ է նահանջում: Սկսում է երկուստեք հատուկոր հրացանաձգութիւն: Բախտի մի չարաղէտ բմահաճոյքով, հէնց այդ փայլուն յաղթանակի վայրկեանին էր, որ «Դաշնակցութիւնը» տեղեկանալիներէն զոհեր: Նա կորցրեց իր Մարտիրոսին... Խիզախ մարտիկը կամեցաւ մնալ միշտ յարձակողական դիրքում և մենակ, անզգոյշ թուխք արաւ թշնամու ուղղութեամբ: 2ափից դուրս առաջ անցնելով՝ զարնեց...

Ինտելիգենտ-տերօրիստի բազմաթիւ պաշտողները մի տարուց ի վեր անդարմանելի սգի մէջ են...

Հանգչիւր խաղաղութեամբ, թանկագին ընկեր. քեզ ծնող ժողովուրդը չի մոռանայ քեզ և կը շարունակէ ծննդաբերել իր խոցուած արգանդից՝ դեռ շատ Մարտիրոսներ:

Մօտիկ ապագայում, յուսով ենք, պիտի կարողանանք տալ գէթ համառօտ կենդանափորները մեր 35—40 զինւորներին՝ որ նահատակել են պարսկական ազատագրութեան մարտադաշտերում: Վարօն և Սէթօն այդ քաջերի թւից են, առաջապահիկ ու համաձայն, գաղափարական և անձնուրաց:

Թիւրքահայեր են երկուսն էլ... Մարտիրոսը, Նիկօլը, Արտէմն էլ—ուսահայեր... Որքան խօսուն է համազգային ներդաշնակութեան լեզուն: Իւ որքան գաճաճ ու ողբալի են, որքան կեղծ, ստալոգ «Դաշնակցութեան»

հակառակորդները, երբ նրանք համարձակում են բարով տալ այդ կազմակերպութիւնը «ազգայնական իդէալի» ու դաւանանքի պակասութեան, ժխտման համար... Ազգային, համահայկական համերաշխութեան մեծ փաստը յեղա-



Վ Ա Ր Օ



Ս Է Թ Օ

ՆԱԶԱՏԱԿԻԱԾ ԵՐԿՈՒՍՈՎ ԱԼԻԱՐԻ ԿՈՒՈՒՄ, 1909 թ. ՓԵՏՐ. 7

կռիւ է մղում Սեմաի խանի զօրքերի դէմ իր մառաջէրով: Ապա նետում է մի ուսումը թշնամու շարքերի մէջ... Ուժանակը պայթում է ահարկու որո-

փոխութեան դաշտերի մէջ է կոփւել, դարձնել և ոչ սինլքոր ու խըշճափաճառ հրապարակագիրների գրչի տակ... Վարօն և Սէթօն թիւրքահայեր են, Անդրանիկի զինւորներից. մասնակցել են թիւրքահայաստանի բազմաթիւ կռիւներին: Վաւել են Մուսթուֆայի հայկական փորութիւ բանակի մէջ և ցոյց են տւել յանդուգն ու փորձառու ռազմիկների յատկութիւններ: Վարօն — մասնաւորապէս՝ Ուշագրաւ է նրա հերոսական դիմադրութեան մի փաստը Մուսթուֆայի բարի կռիւներից: Ծանր վիրաւորւած և արիւնահոս՝ նա ապաստանում է հայ ազգաբնակչութեան հետ եկեղեցու մէջ և այդ վիճակում երկար

տով, խլում է Յ զոհ հակառակորդից, որ այնուհետև սարսափահար փախուստ է տալիս:

Մեկուկէս ամիս բժշկութիւնից յետոյ՝ վերջը կազդուրում է ահա կարծես Սէթօի հետ Ալարի կուում: Երբ Մարտիրոսը նեղն է ընկնում իր անզգոյշ թուիչքի միջոցին—երկու ընկերները օգնութեան են վազում և զարնում՝ են դարանամուտ թշնամիներից:

Յարգանք ժողովրդական դատի երկարամեայ, անխոնջ մարտիկներին, պատիւ նրանց պայծառ ու յաւերժական յիշատակին:

ՎԱՐԱՔԻ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

Հայաստանի հինաւորաց նահանգին մէջ յունիս 20-ին տօնեցաւ քաղաքակրթական նշանակելի ձեռնարկ մը:

Ժողովրդական ինքնաբուխ գործունէութեան և յաւաքագրական անկուն զօրութեան յիմնամեակն է ատիկա: Մեր վերածնունդի առաջին կէս դարն է, որ բոլորեցաւ և անցաւ պատմութեան գիրկը:

Վաթսունական թւականներէն տակաւին շատ առաջ՝ հայ միտքը այս ու այն կողմ՝ հանդէս էր բերած նոր գաղափարներու բողբոջներ: Թիւրքիա, Կովկաս, Հնդկաստան և այլուր մեր ժողովուրդին լաւագոյն արտագրութիւնները — շնորհալի, տաղանդաւոր անհատականութիւններ — նախերգած էին երազական ապագային արշալոյսը: Սակայն բոլոր այդ վսեմ ու դիւցազնական ճիգերը մէկ ամբողջական աւազանի մէջ չէին անցած, մէկ բովանդակութիւն չէին դարձած: Հատուկտոր, ցրիւ, անջառ ու հատաւածական զարթունքներ էին առնել, առաջին թոթովանքները մեր մոլորած ազգութեան:

Շրջապատին հասարակական-քաղաքական պայմանները այնպէս չէին, որ կարող ըլլային շեշտել, խտացնել այդ զարթունքները, ամբողջացնել և մէկ ընդհանուր հոսանք ստեղծել:

Վաթսունական թւականներուն վիճակեցաւ այս պատմական գործը: Միաժամանակ հայ երկրի զանազան հատաւածներու մէջ սկզբնաւորեցան նոր կեանքի խիզախ ու առնական փորձերը: Միջավայրին բոլոր տարրերը, կազմաւորին ամեն արտայայտութիւնները մէկ ընդհանուր ոգիով ներշնչեցան:

Ռուսաստանի հեռաւոր քաղաքներուն մէջ — Մոսկովա, Դորպատ, Պետերբուրգ — Նազարեանցի, Նալբանդեանցի, Ռաֆայէլ Պատկանեանի երախտաւոր շրջանը բացեցաւ ուսանող երիտասարդութեան գաղափարական ու հայրենասիրական գործունէութիւնը հիմնարկեցաւ: Կովկասի մէջ նշանաւոր Աբովեանի հոգեւոր որդիները ժողովրդական գրականութեան սահմանները ընդարձակեցին. աշխարհաբար ու «ռամիկ» հրապարակագրութիւնը սկսեցաւ: Վօֆօրի գեղածիծաղ ափերուն

շուրջը թիւրքահայոց սահմանագրութեան հիմքերը կերտեցան և Զէյթունի բարձրութիւններու վրայ ազատութեան շունչը յաղթականօրէն տարածեցաւ:

Մէկ ընդհանուր, տիրական գաղափար կարծես կը սաւառնէր բոլոր այդ գեղեցիկ աշխատանքներուն վրայ: Հայ երկրի միւս՝ աւելի աննշան՝ հատաւածները ևս անմասն չը մնացին նորութեան գործին: Ամենուրեք կը նկատուէր միեւնոյն ոգիի ու միեւնոյն սկզբունքի թոյլ կամ զօրաւոր ազդեցութիւնը: Այդ գրաւիչ գործունէութիւններու նման և անոնցմէ աշխարհագրապէս հեռու մէկը կար, որ ուրիշ տեսակէ տոգոյ հրահանգիչ էր ու վերին աստիճան նշանակալից: Հայաստանի անմիջական հողին վրայ, հայ ժողովրդի ծոցին մէջ, պատմական յիշատակներու ու հանգած քաղաքակրթութեան բեկորներուն քով՝ այդ սկզբնաւորութիւնը որքան ալ պակասաւոր ըլլար իր փիլիսոփայական արեւմտեան մտահայեցողութեամբ, իր գրական արտայայտութիւններով — այնուամենայնիւ մեծ է իր անմիջական ու թեւաւոր, հարաւատուութեամբ, ինքնատպութեամբ ու իրական ազդեցութեամբ...

Վարագի դպրոցը, գիւղատնտեսական-հողագործական հաստատութիւնը, մամուլը, «Վասպուրական Արժւի»-ն թիւրքահայոց մտաւոր, հասարակական և նոյնիսկ քաղաքական վերածնունդի իսկական առաջամարտիկը հանդիսացան: Մայրաքաղաքի մէջ ծագում առած սկզբնաւորութիւնները իրենց բոլոր առաւելութիւններով հանդերձ չէին ներկայացնել ժողովրդական ինքնուրոյն հանճարը: Հեռաւոր, օտար ազդեցութիւններու ենթակայ, զուրկ ազգային արիւնէ ու մարմինէ, մեկուսացած՝ Պօլսի վերանորոգչական գործունէութիւնը չունէր ժողովրդական այն ոգին, աղբիւրը, հիմքը, որպէսզի կարող ըլլար առողջ, խորունկ, հաստատուն վերածնունդ սկսիլ մեր պատմական կեանքին մէջ:

Առանց երկրի շարժման՝ մայրաքաղաքին ըրածը ամուլ, անպտուղ և ապարդիւն պիտի ըլլար: Այս է պատճառը, որ վաթսունական թւականներուն Խրիմեան վարդապետի ձեռնարկութիւնը այնքան կարեւոր ու այնքան նշանակելի կերեալ մեզ:

Գաւառացի այդ համեստ կրօնաւորը տակաւին այն ժամանակ խորապէս ըմբռնեց, որ մեր քաղաքակրթութեան հիմքը երկրի մէջ է. կրցաւ հասկնալ, որ ազգային ամեն հիմնարկութիւն գին և արժէք ունի, երբ ստեղծագործող «ժողովրդի» համար է, անոր քով և անոր միջոցով: Այս հիմնական գաղափարը անկիւնաքարը եղաւ անոր հասարակական-գրական-վարդապետական գործունէութեան: Իւ առաջին անգամ դարեւոր խաւարէն յետոյ հնչեց «դէպի երկիր» բազմաբովանդակ կոչը: Այս հրաւերը մեր նորագոյն պատմութեան ամենամաքուր էջերէն է և անոր դիմացկունութեան ամենամեծ գրաւականներէն: Մեր

կէս-գարեան բոլոր յառաջագիտական հոսանքները, սկսեալ ազատամիտ շրջաններէն մինչև վերջին յեղափոխական-մարտական սերունդը՝ կրցած են ոգևորել հաւասարապէս այդ իմաստուն, առողջ, խելացի սկզբունքով: Եթէ հարկաւոր է, որ մենք քաղաքակրթւիք, իբրև ուրոյն ազգային համախմբում, իբրև պատմական ամբողջութիւն — ապա մեր նոր կեանքին արմատները պէտք է տնկել երկրին մէջ...

Վասպուրականի վերանորոգչական շարժումը և խրիմեանի գործունէութիւնը մէկէ աւելի կարևոր արտայայտութիւններ ունեցաւ: Կեանքի բովանդակ փոփոխութիւնը և ամբողջական բուժումն էր այդ շարժման նպատակը և իդէալը: Անհրաժեշտ էր վերակազմել և՛ դպրոցը և՛ տնտեսական-հողագործական վիճակը, նորացնել գրականութիւնը, ստեղծել հրապարակագրութիւնը... Եւ կ'ընդհանուր աշխարհահայեացքը, մէկ ինքնատիպ, առողջ մտահայեցողութիւն ուղղութիւն կուտար այդ գործունէութեան: Միացնել, ներդաշնակել հայ մտքին և կամքին զանազան արդիւնքները և բոլորը մէկէն առաջ տանել:

Գաղթականութեան, պանդխտութեան և առհասարակ աղքատութեան դէմ մրցելու համար անհրաժեշտ եղաւ առանձին ուշադրութիւն դարձնել երկրին հողագործական վիճակին: Այս մտահոգութիւնը չափազանց հրահանգիչ է Հայաստանի մէկ խուլ անկիւնի մէջ, անցեալ դարու վաթսուներեակն թուականներուն: Հոն հասկըցւեցաւ այն կարևոր ճշմարտութիւնը, որ առանց տնտեսական, նիւթական բարելաւման չկայ իսկական վերածնունդ: Կոր գործիքներով, մշակութեան նոր ձևերով կամեցան տնտեսութիւնը զարգացնել և նիւթական արտադրութիւնը աւելցնել: Վարագի շարժման ղեկավարները բնածին իմաստութեամբ զգացին և ըմբռնեցին այն խորունկ կապը, որ գոյութիւն ունի բարոյական և տնտեսական արտայայտութիւններու միջև ու հասկացան այն մեծ ազդեցութիւնը, որ երկրի մը տնտեսական կացութիւնը ունի ընդհանուր կեանքին վրայ:

Այս տեսակէտէն մեկնելով դպրոցը և կրթութեան գործը առհասարակ հիմնական փոփոխութեան ենթարկւեցան: Վաղեմի, աւանդական ըմբռնումները, վերացական հասկացողութիւնները, միջնադարեան անմարմին ու անկենդան գաղափարները դուրս պիտի վտարւէին նորագոյն դպրոցներէն: Մանկավարժական առողջ սկզբունքներ մշակւեցան: Դպրոցը կեանքին համար է. դպրոցը քաղաքացի պէտք է պատրաստէ. դպրոցը գործնական ապէս պէտք է նպաստէ հասարակութեան զարգացման ու բարեկեցութեան *):

Այս միտքը վարագի շարժման և առհասարակ խրիմեանի ամբողջ գործունէութեան միջէն կարմիր թելի պէս կ'անցնի: Կրօնական մեռած ու աստուածաբանական անիմաստ մարզանքներու փոխարէն — որոնց վրայ հիմնած էր մեր նախկին կրթական գործը — մանուկ սերնդին պէտք է ուսուցանել կեանքի իմաստութիւնը, գործնական, իրական ճշմարտութիւններ:

Գրական ճիւղին մէջ Վասպուրականի շարժման գերը չափազանց կարևոր է և անոր ազդեցութիւնը թիւրքահայոց գրականութեան վրայ բաւականաչափ զգալի: Պոյսի մեռած ու անհարազատ գրականութեան ուժգին հակահարածն էր խրիմեանի ստեղծած գրական դրպրոցը: Առողջ, բնական, կենդանի, ժողովրդական. ահա — ասիկա այն տարրերը, որոնք յատկանշական են այդ ուղղութեան համար: Գրական արտայայտութեան ձևերը, ժողովրդական հարուստ ու բեղմնաւոր լեզուն, ինքնաբերական, գեղեցիկ դարձածքները, ժողովրդական գրաւիչ նիւթերը, երգերը, առասպելները, մէկ խօսքով՝ դարերու այն չքնաղ, հանճարեղ արդիւնքը, որ արտադրած է հայ միտքը և հայ քաղաքակրթութիւնը՝ հիմք դարձան այդ գրականութեան: Գարեգին Սրուանձտեան, Արիստակէս Տէվկանց, Տիգրան Ամիրջանեան, ինքը խրիմեան՝ այդ շարժման հիմնադիրն ու հոգին մինչև օրս կը մնան օրինակելի ժողովրդական-ազգային գրողներ: Այսօրայ «գաւառական» գրականութեան սկիզբները, թլկատեցիի, Զարդարեանի, Գեղամ Տէր-Վարապետեանի և այլոց հետեւած գրական ուղղութեան արմատները կը գտնուին Վասպուրականի և Տարօնոյ մէջ: Ու այսօր ալ, յաջողութեամբ կուելու համար Պոյսոյ վատառողջ ու վրիպած գրականութեան դէմ՝ ստեղծագործելու համար հայկական ինքնուրոյն գրականութիւն, թիւրքահայոց գրագէտները՝ բանաստեղծ թէ վիպասան՝ պէտք ունին վարագի գրողներու ուսումնասիրութեան և աջակցութեան...

Գիւղատնտեսական, դպրոցական, գրական արտայայտութիւններէն բացի՝ վարագի շարժումը նշանաւոր եղաւ նաև իր հրապարակագրութեամբ: «Վասպուրական Արժէ»-ն մեր պարբերական մամուլի պատմութեան մէջ խոշոր տեղ ունի: Անոր հմայքը նոյնչափ մեծ է, որքան Մոսկվայի «Հիւսիսափայլ»՝ հմայքը՝ Միլենոյն սկզբունքներուն, միլենոյն գաղափարներուն, միլենոյն աշխարհահայեացքին զանազան արտայայտութիւններն են՝ մէկը հայ երկրէն հեռու, միւսը Հայաստանի հողին վրայ: Մինչև անգամ որոշ տեսակէտով — մարտական-գիմարդութեան քարոզներով — «Վասպուրական Արժէ»-ն աւելի արմատական եղաւ ու աւելի խիզախ:

*) Այս առիթով շահեկան կը համարինք յիշատակել հետեւեալ խրիմեանի մէկ բանաստեղծութիւնը, որ արտասանուած է Կովկասի Գայրոցներէն միւլու մէջ, բազմաթիւ աւակներու առաջ. «Բրիտոս

կրսէ. „ոչ միայն հաւցիւ կեցցէ մարդ, այլև քաղիւ“. Ես ալ կըսեմ, „ոչ միայն քաղիւ կեցցէ մարդ, այլև հաւցիւ“. Հա՛ց պէ՛տ է մեր կեանքի և քաղաքական զարգացման համար...

Երկու հիմնական գաղափար ուղղութիւն կուտան անոր հրապարակագրութեան:

Մէկ կողմէ՝ ժողովրդասիրութիւն—մշակ, երկրագործ, արհեստաւոր, գործաւոր դասերուն պաշտպանութիւն՝ ընդդէմ վաշխառուներու, ամիրաներու, էֆէնտիներու, աղաներու, հակաժողովրդական եկեղեցականներու: Դասակարգային այս նախնական գիտակցութիւնը բաւականաչափ զգալի է վարագի հրապարակագրութեան մէջ: Յետեւում ոգեւորութեամբ և անկեղծ զգացմունքով երգւած է հոն աշխատաւոր դասերու բովանդակ օգտակարութիւնը, պիտանութիւնը և առաջնութիւնը հասարակական զարգացման մէջ: Թիւրքահայոց վերջին կէս դարու պատմութեան վրայ անջնջելի հետք է թողուցեր վասպուրականի այս ժողովրդասիրական և ռամկավարական գաղափարը:

Միւս կողմէ՝ առանձնապէս հետաքրքրական է այն դերը, որ հանդէս բերաւ Խրիմեանի դպրոցը յիշափոխական-մարտական գաղափարի տարածման գործին մէջ:

Պատկերական Արծուի՝ չափազանց հեռու Եւրոպայի փոթորկալից կեդրոններէն՝ այնուամենայնիւ կրցած է զգալ, հոտ առնել հոն կատարուող քաղաքական-յեղափոխական շարժումները, հասկնալ նման շարժումներու ահագին նշանակութիւնը, բարոյի մարտի, պայքարի, դիմադրութեան սկզբունքը մեր ստրուկ իրականութեան մէջ: Եթէ կառավարութիւնները անընդունակ են արդարութեամբ և հաւասարութեամբ կառավարել երկիրը, ժողովուրդները — կ'ըսէր Խրիմեան — իրաւունք ունին և պարտաւոր են ըմբոստանալ, ընդվզել, զինուել օրութեամբ տապալել անիրաւ կարգերը և վերականգնել արդարութեան խախտւած հաւասարակշիռը: Թիւրքական բարբարոս իրաւակարգի մէջ, Թիւրքահայոց կրաւորական հնազանդութեան մէջ այս գաղափարը իսկական յայտնագործութիւն էր: Վասպուրականի այս շարժումը սկիզբն էր այն հերոսական, անձնանէր, գաղափարական մարտին, որ յետագայի հայ լաւագոյն երիտասարդութիւնը վարեց ընդդէմ Թիւրք բռնակալութեան:

Հայ յեղափոխութեան նախերգանքն էր այն...

Վարագի այս առաջին յիսնամեակը արեան և պարտութիւններու յիսնամեակ եղաւ: Աշխատենք, որ առաջիկայ յիսնամեակը ազատութեան ու արդարութեան լիակատար յաղթանակի յիսնամեակն ըլլայ:

Արշալոյսը ծագած է արդէն...

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ն Ո Ր Թ Ի Ի Ր Ք Ի Ա Ն

II

Մեր յօդուածի առաջին մասը աւարտեցինք՝ յիշատակելով Մետերնիխի չարամիտ խորհուրդը Թիւրք կառավարութեան և ցուցադրելով առհասարակ արտաքին ոտնձգութիւններու պատմութիւնը, որ մեծ դեր է խաղացած օսմանեան վերանորոգութեան գործին մէջ: Ներքին մասնայատուկ խոչընդոտներու բովանդակական կարգ մը կառավարութիւններու և դիւանագետներու յարուցած դժարութիւնները յիշափոխական են: Հետամուտ իրենց անձնական շահերուն՝ անոնք, տասնիններորդ դարու ամբողջ տարածութեան վրայ, ջանացած են լուծել Թիւրքիոյ պետական խնդիրները իրենց տեսակէտներու համաձայն: Արդարութեան ձայնը, մարդկայնութեան սկզբունքը, ժողովուրդներու հրամայական պահանջները, ազգերու իդէալները զոհաբերւած են յաճախ այս կամ այն երկրորդական մտահոգութեան և այս կամ այն զօրաւորի բռնաճոյքին:

Աւստրիա, Ռուսաստան, Գերմանիա հանգիստ կը թողուն արդեօք և մէկէ աւելի դժարութիւններ չեն յարուցաներ այսօրեան երիտասարդ Թիւրքիոյ դէմ, որ իր բազմաթիւ խոչընդոտներու մէջ հարկադրւած է պայքարել այդ պետութիւններու կայսերական ոճիրներուն դէմ ևս:

Պատմական չարիքն է ասիկա, որ գաղտնի ու դաւադիր՝ միջամտած է վերանորոգութեանց ամբողջ տեղումներուն միջոցին և խրախուսած է ներքին հակառակորդութեան անվճռականութիւնն ու կրաւորականութիւնը:

Մետերնիխի չարախորհուրդ ներշնչումներն իրենց ազդեցութիւնն ունեցան Թիւրքական աշխարհի վրայ: Յետադիմականներու կուսակցութիւնը՝ Հին Թիւրքիան, ընդդիմութեան նշաններ ցոյց տուաւ: Արդիւ-Մէջիդ հարկադրւած՝ նոր հրովարտակի մը մէջ կարեւոր մեղմացումներ մտցուց: Թանգիմատի պարզ ու որոշ տոնը նսեմացաւ:

Այնուամենայնիւ՝ հակառակ ներքին և արտաքին թշնամիներու՝ վերանորոգութեան կուսակցութիւնը մէկ քանի նւաճումներ ըրաւ: Բանակի մէջ կարեւոր փոփոխութիւններ առաջացան, հարկային գրութիւնը բարելոքեցաւ, դպրոցը փորձեց աշխարհականանալ: Փոքր առ փոքր մզկիթի հսկողութեան փոխարինեց պետութեան հսկողութիւնը կրթական գործի վրայ: Ռէզիդիալան վերականգնեց իր ազդեցութիւնը և ընկած դիրքը: Եւ 1846 թւականին օտարադաւան հպատակներուն յայտարարեցաւ հետեւալ համարձակ խօսքը. «Կայսրը կը կամենայ, որ իր քրիստոնեայ և հրէայ հպատակները մահաբաններու պէս վայելեն ամեն բարեք: Կ'ըսենք ի դաւանութեան տարբերութիւնը իրենց գործն է. ասիկա բնաւ խոչընդոտ չպիտի ըլլայ անոնց իրաւունքներուն»...

Եւ այսպէս, դժարին ու ծանր պարագաներու մէջ օսմանեան կայսրութիւնը եւրոպականացման ճիգեր կ'ընէր: Սկզբնական ակամայ, հարկադրեալ շարժումներու վրայ հետզհետէ կը յաւելանային կամաւոր, անկեղծ գործողութիւնները: Մահաբան հասարակութեան մէկ մասը տարիներու ընթացքին մէջ եւրոպական քաղաքակրթութեան հետ շփուելով՝ կը զարգանար մտաւորապէս, կը փոխէր քաղաքական-բարոյական իր աշխարհա-

Հայեացքը, կը բարեշրջէր հասարակական իր իգէալները: Յառաջագիւծութեան և էւօլիւսիօնի ազդեցութեան ենթարկելով՝ կամաց-կամաց կը խախտէր միջնադարեան այն հոգեբանութիւնը, որ կազմակերպած էր դարերու խաւար հոսանքին մէջ: Հասնական կերպարանքը թիւրք և մահմեդական մարդու, հնամայ տիպը արեւելեան մտաւորականի տեղի կուտար ժամանակի ամենակարող ներգործութեան և կըստեղծէր նորագոյն քաղաքակրթութիւնը:

Այս ուղղութեամբ և այս ոգով պիտի սնունդ ստանար ու զարգանար թիւրք ազատագրական շարժումը և վերանորոգութեանց գործը: Այս տարրն է, որ յետագային աւելի ու աւելի լայնանալով՝ ստւարանալով վճռական պաշտօն պիտի ստանձնէր թիւրքի պատմութեան մէջ: Առանց անոր մասնակցութեան բոլոր բարի գիտաւորութիւնները, Եւրոպայէն ներշնչած երկիւղները, կառավարական ծրագիրները ամուլ և ապարդիւն պիտի մնային:

Դժբախտաբար յիսունական թւականներուն հասարակութեան այս մասը չափազանց սակաւաթիւ էր, որպէսզի կրնար որեւէ դեր խաղալ պետութեան քաղաքականութեան մէջ: Վերանորոգութեան գործը տակաւին կառավարութեան և բարձր շրջանակներու ձեռքն էր: Քաղաքական ազատութեան և նորագոյն գաղափարներու ձայնը դարձեալ կայսերական գահոյքէն կուգար:

1858 թւականի փետրւար 18-ը աւելի վճռական և աւելի համարձակ եղաւ: Այդ օրը Աբդուլ-Մեջիտի կառավարութիւնը անհամեմատ աւելի ազատական էր, քան 1839 թւի նոյեմբեր 3-ին, Գիւլ-Հանէի ակտը հրատարակելու ատեն: Հատուի-Հիւմայունը, «կայսերական գրութիւնը», հետեւեալ սկզբունքները կը հրահանգէր՝ մահմեդական աշխարհին.

«Ամենուն հաւասարութիւնը օրէնքին առաջ, անհատական և հաւաքական սեփականութեան յարգանքը, ընդունելութիւն բոլոր քաղաքացիներուն — առանց կրօնի և ազգի խտրութեան — պետական և հասարակական բոլոր պաշտօններու և զինուորական ծառայութեան մէջ, դաւանանքներու և պաշտամունքներու ազատութիւն, հանրային կրթութեան ազատութիւն, հաւասարութիւն հարկերու և տուրքերու, վկայութիւններու հաւասարութիւնը արդարադատութեան մէջ և այլն և այլն»:

Սակայն դժբախտաբար այս և ասոնց նման հրահանգները իրականութիւն չդարձան թիւրքական յետամնաց մթնոլորտին մէջ: Հասարակութեան մեծ մասը, անգամ քրիստոնեայ ժողովուրդներու պաշտօնական ներկայացուցիչները անբարեացակամ դիրք բռնեցին կառավարութեան ազատամտութեան հանդէպ և Հատուի-Հիւմայունը մեռած տառ մնաց:

Քրիստոնեաներու ազատագրումը, օտարադաւաններու քաղաքացիական հաւասարութիւնը անպայման կերպով կ'ենթադրէր պետութեան ազատագրումը մահմեդական կրօնի նեղմիտ և միակողմանի վարդապետութենէն: Քրիստոնէի և մահմեդականի հաշտութիւնը իրագործել կը նշանակէր պետութեան ընթացքը դնել աշխարհականացման ճամբուն վրայ: Այս երկու խնդիրները սերտօրէն կապուած էին միմեանց հետ և երկուքն ալ հաւասարապէս կենսական էին թիւրքի համար: Երբ

լուծէր այդ արիւնոտ հանգոյցը, կամ գէթ բաւականաչափ թուլանար — այն ատեն առաջ պիտի մղէին զուտ քաղաքական-օրէնսդրական հարցեր:

Կեդրոնական իշխանութեան իրաւունքները պիտի սահմանափակէին և պետութեան կեանքին մէջ աւելի բազմակողմանի տարրեր պիտի մասնակցէին:

Ֆրանսական պատմութեան ներշնչումներն ու քաղաքականութեան ազդեցութիւնները այս տեսակետով բարեբար եղան: Բացարձակ միապետութեան գաղափարը սկսաւ տատանիլ և ժողովրդական կառավարութեան հետեւոր ու աղօտ իդէալը նախազգացեցաւ:

Պետական խորհրդի, Է. ու. ր. ա. -ի-դ. է. վ. է. թի հիմնարկումը, 1868 թւի մայիսի 10-ին, այդ ուղղութեամբ առաջին քայլ դիտեցաւ: Քաղաքական այդ նոր հաստատութիւնը, ուր երեւան պիտի գային պատգամաւորներ ամեն ազգէ և նահանգէ և ուր ռայաներու թիւը պիտի ըլլար մէկ երրորդէն ոչ նւազ՝ իր մէջ կը պարունակէր պարլամենտին սաղմը և ազգային ներկայացուցչական մարմնի երկչոտ ու տարտամ փորձը:

Այս հիմնարկութեան առիթով և անոր բացման հանգիստաւոր օրը սուլթան Աբդուլ-Ազիզ հետեւեալ ճառը կ'արտասանէր. «Նոր կազմակերպութիւնը հիմք ունի կրօնական, քաղաքացիական, դատաստանական և գործադիր մարմիններու բաժանումը: Իմ հպատակները ինչ դաւանանքի ալ ըլլան՝ նոյն հայրենիքի որդիքն են: Կրօնի տարբերութիւնը զանոնք չպիտի անջատէ: Ամենքը ազատութեամբ կրնան հետեւիլ իրենց հաւատին: Եւ իմ պարտքս կը կատարեմ ամեն մէկուն իր իրաւունքը ցոյց տալով և հետեւելով այն սկզբունքներուն, որոնք համապատասխան են նորագոյն պահանջներուն...»:

Մէկ ընդհանրական հայրենիքի գաղափարը օսմանեան բոլոր ժողովուրդներու համար, սահմանադրական-ներկայացուցչական վարչաձևի իդէալը — ահա սակայն երկու տարրերը, որոնք մուտք կը գործեն թիւրքի պատմութեան մէջ եօթանասնական թւականներէն սկսեալ: Այդ գաղափարները անշուշտ չը պիտի իրականան կարճ ժամանակի մէջ: Ամբողջ թիւրքի պիտի բաժնէի երկու հակառակորդ, ախոյեան բանակի Պիտի սկսին գաղափարական ճակատամարտներն ու հասարակական-քաղաքական ընդհարումները: Պիտի հարկաւորին հերոսական ջանքեր, պիտի տեղի ունենան արիւնոտ գալարումներ ու եղբրական պարտութիւններ — մինչև որ Եւրոպայի թիւրքի կրնայ ձեռք բերել նւազագոյնը մարդկային արդարութեան և նոր քաղաքակրթութեան:

Այսպէս, հետզհետէ աւելի ու աւելի զարգանալով՝ օսմանեան պետութեան վերակազմութեան միտքը՝ եկաւ կանգ առաւ սահմանադրական ձևի վրայ: Զինուորական, կրթական, դատական, հարկային և այլ բարենորոգումները պէտք է ամբողջանային և դառնային մէկ ընդհանուր, արմատական վերանորոգում: Հին, բռնաւոր միապետութեան սկզբունքը հակասական էր նորագոյն այն գաղափարներուն, որոնք պէտք է կիրարկէին թիւրքի սահմաններուն մէջ:

Անպատասխանատու կառավարութիւն մը, բացարձակ իրաւունքներու տէր միապետ մը, հակաժողովրդական պաշտօնէութիւն մը չէին կրնար, չէին կամենար անկեղծօրէն երկիրը դնել եւրոպականացման, յառաջագի-

մութեան ճամբուն վրայ: Մէկ-երկու իշխանաւոր, մէկ-երկու նախարար թերեւ տարած բուռն և անշահա- խնդիր հայրենասիրութեան զգացմունքներով ձգտէին երկիրը քաղաքակրթել, սակայն կառավարական-վարչա- կան բովանդակ օրգանիզմը, պետական վաղեմի կառուց- ւածքը, հին, արտօնեալ ամբողջ դասակարգը բնաւ չէր կամենար ընել այդ: Անհրաժեշտ էր ուրեմն ժողովրդա- կան լայն շրջաններու մասնակցութիւնը կառավարու- թեան և պետական օրէնսդրութեան: Հարկաւոր էր սահմանափակել միապետին իրաւունքները և անոնց մէկ մասը յանձնել ժողովրդական պատգամաւորներուն:

Պարլամենտի, խորհրդարանի գաղափարն էր, որ իր գլուխը կամաց-կամաց կը բարձրացնէր օսմանեան երկ- րին մէջ: Իւրոպան վաղուց ծանօթ էր այդ գաղափա- րին. ծանօթ էր նաև անոր գործադրութեան: Եթէ մէկ կողմ թողունք միւս ազգերու և յատկապէս Անգլիոյ պատմական օրինակը՝ ֆրանսան մէկէ աւելի բուռն և ճակատագրական պայքարներ է ունեցեր իր կառավո- րութեան դէմ՝ իրագործելու համար նոր ժամանակ- ներու քաղաքական իմաստուն յղացումը: Թիւրք պետա- կան անձերը անշուշտ տեղեակ էին այն հերոսական ճակատամարտներուն, որոնք կը մղէին ժողովուրդներու և կառավարութիւններու միջև: Անոնցմէ ոմանք, ան- շուշտ, կը տեսնէին, որ յաղթանակը վերջիվերջոյ սահ- մանադրականներու կողմը կը մնար և որ ուժեղ են, բա- րեկեցիկ, ապահով սահմանադրական պետութիւնները:

Օսմանեան երկիրը ևս զնել նոր քաղաքակրթութեան սկզբունքներու վրայ, այստեղ ևս իրագործել եւրոպա- կան քաղաքական հիմնարկութիւնները, հոս ևս բանալ ազատութեան, հաւասարութեան և եղ- բարարութեան հրաշալի դարը:—Ահաւասիկ այս էր եօթանասնական թուականներու թիւրք նշանաւոր հայ- րենասէր և քաղաքական մեծանուն գործիչ Միդհատ փաշայի սահմանադրութեան նպատակը և ոգին:

Անշուշտ այդ պատմական յիշատակագրի մէջ կան բազմաթիւ թերութիւններ ու պակասներ. անշուշտ ան ամփոփումը չէ սահմանադրական-աւստիարակտն նո- րագոյն տենչանքներու և սկզբունքներու—բայց և այդ անկատար ձևով դժբախտ գործիչի սահմանադրութիւնը քաղաքական խոշոր նորութիւն մըն էր օսմանեան երկրի պատմութեան համար:

Եւ այս սահմանադրութիւնը ամեն բանէ աւելի ա- ր- տաբին շարժառիթներէ կը յառաջանար: Մեր յօդ- ւածին սկիզբը, հարեանցօրէն և թուուցիկ, վերլուծելով վերանորոգութեանց սկզբնական փորձերը՝ նկատած էինք, որ անոնք Թիւրքիոյ քաղաքական անկասկածութիւնը պահ- պանելու համար յղացւեցան: Գերբին, օրգանական հա- սունութեան հետեանք չէին, դժբախտաբար, այլ լոկ արտաքին ճնշման արդիւնք: Ժողովուրդը չէր, լայն հա- սարակութիւնը չէր, որ կը մբոստանար, կը բողոքէր, կը պահանջէր նոր իրաւակարգ և հասարակարգ:

Հետզհետէ, արդարեւ, բնաշրջումը աւելի խորացաւ, նոր գաղափարները տարածւեցան, հասարակութեան միջին խաւերը սկսան կամաց-կամաց տոգորել պետա- կան վերակազմութեան իդէալով—սակայն չհասան մինչ այն աստիճան, որ յանձն առնէին յեղափոխական ճա- նապարհով և քաղաքական դիմադրութեամբ պաշտպա- նել ու իրագործել Միդհատի սահմանադրութիւնը: Կա-

ռավարական հին օրգանիզմը, ինքը ժամանակի միա- պետը՝ Աբդուլ Համիդ՝ ներքուստ թշնամի էին ներ- կայացուցչական, պարլամենտական ռեֆորմին: Արտաքին դժուարութիւնները, սակայն, Թիւրքիան անջատելու դի- ւանագիտական թաքուն խորհուրդները, Բոսնիայի, Հեր- սէթի շարժումները, Բուլղարիոյ ապստամբութիւնը հարկաւորեցին օսմանեան կառավարութեան առժամապէս փրկութիւն որոնել սահմանադրութեան մէջ:

Իւ այն ժամանակ, երբ մեծ պետութիւններու ներ- կայացուցիչները համախմբւած Թիւրքիոյ մայրաքաղաքին մէջ կը պատրաստէին բանալ չարագուշակ կօնֆե- րանսը, 1876 թուականի դեկտեմբեր 23-ին, թնդա- նօթի աղաղակէն յետոյ՝ թիւրք ներկայացուցիչը՝ Սաֆ- վէտ փաշա ելաւ և հետեւեալ խօսքերը արտասանեց.

Պարոններ, թնդանօթի այն հարւածը, որ դուք լսեցիք՝ նշան է վեհափառ սուլթանի հրատարակած սահմանադրութեան: Սահմանադրութիւն, որ պիտի երաշխաւորէ իրաւունքները և ազա- տութիւնները կայսրութեան բոլոր հպատակներուն անխտիր կերպով: Իսկ կը կարծեմ, որ այս մեծ եղելութեան հանդէպ մեր աշխատանքները այսուհետեւ աւելորդ են:

Աւ մինչդեռ այս խօսքերը կ'արձագանքէին ժո- ղովասրահի հանդիսաւոր լուրթեան մէջ՝ հոն, դուրսը, նոյն ոգևորութեամբ ժողովրդին կը կարդային կայսե- րական խոստմնալից հրովարտակը:

Միդհատ փաշայի սահմանադրութիւնը ըստ երևոյթին իրականութիւն կը ստանար և օսմանեան պատմութիւնը ասես հրաժեշտ կուտար իր դարաւոր անպատուութեան:

ՀԱՍՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԵՒ

ՏԵՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ

(Մեր աշխարհագրայնացքի Յիմֆիրը)

III

«Եւ ամեն տեղ, այնուամենայնիւ, պատ- մութեան տարափելի անիւք կոխուտեց «հին, բարի ժամանակների» այդ մի շարք տաքինութիւնները, գրեթէ ամեն տեղ անհետացաւ կամաց-կամաց նախնական հաւատարմութիւնն ու աւստիարակութիւնը... Աւաջ եկաւ գոռոզ, ճնշող արիւտակա- տիւն, հողային ագնականութիւնը, գրեթէ բոլոր երկրներում հաստատուեց աւստա- պետական կարգուսարքը իր համափիւռ. քառով, անիշխանական զարհուրանքներով, ապա քառից ծնունդ առաւ միապետու- թիւնը, աւելի գոռոզ, աւելի ճնշող, թէև աւելի օրինաւոր ու կարգապահ—և ամեն ինչ երթարկեց իր միահեծան իշխանու- թեանը»...

Այսպէս ասացինք նախորդ յօդւածում: Ասացինք նաև, որ ողբալու չէ մարդկային պատմու- թեան այդ արիւնալի ու արհաւիրալի թռիչքները: Ի՞նչ կը լինէր, արդարեւ, մարդկութեան վիճակը,

եթէ նա մնար յաւիտեանօրէն այդ նախնական մանրանկար-նակար-նակաւարութեան ու գոհճիկ կոմմունիզմի աստիճանի վրայ:

Եւ ի՞նչ «կոմմունիզմ» էր դա: Բղխո՞ւմ էր նա մարդկային մտքի գիտակցական, ստեղծագործող աշխատանքից: Ի՞նչ հաւասարութիւն էր դա: Հիմնա՞ծ էր նա մարդկանց փոխադարձ իրաւունքների ու պարտաւորութիւնների ըմբռնումի և գիտակցական սահմանումի վրայ:

Ամենեւին: Գիտակցութիւնը գործ չունէր այդտեղ, քանի որ այդ նախնական վայրենութեան շըրջաններում տիրապետող իրողութիւնն էր՝ խակ ու խուպան բնազդը միայն: Ամեն ինչ բնազդային էր, անհաշիւ—ինչպէս որ բնազդային ու անհաշիւ է որոշ անասնական տեսակների մէջ թագաւորող հասարակակարգը (մըջիւնների, մեղունների, ջրշունների և այլն):

Բնազդը նոյնպէս, անտարակոյս, հրաշալի մի կարողութիւն է, բնութեան արգասաւոր ու թանկագին մի պարգև: Ի՞նչ զմայլելի կատարելագործման է հասնում ալտրուիզմի, այլասիրութեան, փոխադարձ աջակցութեան բնազդը վերոյիշեալ կենդանական տեսակների մէջ... Ի՞նչ թանկագին գանձ է նա և մարդկային նախնական համայնքների աշխարհում:

Կան վայրենի, բիրտ համայնքներ—ասում է Սպենսեր իր Հասարակագիտութեան հիմունքների մէջ—որոնք իրենց ազնիւ հակումներով կարող են ամօթահար անել քաղաքակիրթ մարդուն: Հնդկաստանում կան ցիրուցան բեկորներ նախնական ցեղերի, որոնց մէջ ճշմարտախօսութիւնն ու շիտակութիւնը օրգանական յատկութիւններ են: Նրանք այդ կողմից աւելի բարձր են, քան իրենց հարեան ինդուսները—որոնք անհամեմատ աւելի զարգացած են և արդէն որոշ քաղաքակրթութեան տէր—նրանք բարձր են նոյնիսկ եւրոպացիներից:

Ուրիշ բազմաթիւ վայրենի ցեղերի մէջ ևս, մանաւանդ լեռնականների աշխարհում, միսիոնարների ու ծանապարհորդ գիտնականների վկայութեամբ, ծաղկում են ամենաբարձր առաքինութիւնները՝ շիտակութիւնը, ալտրուիզմն ու պատւասիրութիւնը և արհամարհումն են՝ կեղծիքը, սուտը, գողութիւնը և այլն:

Մի բանի աստիճան վեր բարձրացէք քաղաքակրթութեան սանդուխով և մտէք ամերիկական Ֆիլիպինների մէջ, որոնք անգրագէտ ցեղերի աշխարհում համարւում են ամենախելացին,—ունեն քաղաքական կազմակերպութիւն, զինւորական կարգեր, երկրագործութիւն, նաւարկութիւն և այլն: Այդտեղ դուք կը տեսնէք մի բոլորովին ջոկ պատկեր. սուտը, կեղծիքը, դաւաճանութիւնն ու մարդասպանութիւնը նւիրագործւած օրէնքներ են. երեխաներին յաճախ կոտորում են, հիւանդաներին խեղդամահ են անում, կենդանի մարդկանց յօշոտում են, լափում:

Մի աստիճան ևս վեր բարձրացէք ու մտէք աֆրիկական դասօժէնների աշխարհը: Քաղաքակրթութիւնը մի քայլ առաջ է. աշխատանքի բաժանումը աւելի է զարգացած, հասարակական գասակարգերը՝ աւելի բազմաթիւ. կանոնաւոր զօրք, օրէնքներ, բանտեր, ոստիկանութիւն: Սակայն այդ բոլորը ունենալով հանդերձ՝ դասօժէների հայրենիքը ոչ այլ ինչ է, բայց եթէ կազմակերպւած մի ոճրանոց: Պատերազմներ են մղում

միմիայն նրա համար, որ ձեռք բերեն մարդկային գանգեր արքայական պալատները զարդարելու համար: Հարիւրաւոր հպատակներ են մորթւում, երբ մեռնում է թագաւորը և ուրիշ հարիւրաւորները ուղարկւում են նրա ետեւից իւրաքանչիւր տարի: Արիւնաբու և ստախօս, մարդկային ամեն արժանաւորութիւնից զուրկ՝ դասօժէները նոյնպիսի գազաններ են իրենց հարազատների՝ ծնողների ու զաւակների, քոյրերի ու եղբայրների դիմաց:

Շարունակելով մեր ճանապարհը դէպի նորագոյն քաղաքակրթութեան որրանները, ամեն տեղ մենք աւանատես կը լինենք նման բարբարոս տեսարանների: Ասորեստանի կոտորածներն ու գերի բռնւածների կլասիկ դարձած չարչարանքները, Եգիպտոսի թագաւորների խժգժութիւնները, Հռոմի դարաւոր ողբերգութիւնը, գլադիատորական, սուսերամարտական արիւնոտ նախճիրներով, Նեքոնների ու Ատտիլանների հեղինակած արհաւիրքները, միջնադարեան բրիտանիայի եւրոպայի ամբողջ պատմութիւնը՝ իր ինկիզիցիայով, հաւատաքնութեամբ ու մասսային ջարդերով, վերջապէս, նորագոյն շրջանը՝ իր յատուկ սարսափներով, դիւանագիտութեան և գաղութային քաղաքականութեան աշխարհադղորդ ոճիրները—այդ բոլորը դժւար թէ նսեմանայ դասօժէների և ֆիջիների գազանութիւնների առջև...

Ո՞րպիսի հակապատկեր, բարոյական տեսակէտից որքա՞ն ահագին տարբերութիւն այդ մեծ ցեղերի և մարդկային այն բիրտ, ստոր, նախնական համայնքների մէջ, որոնց մասին բիչ առաջ խօսեցինք, որոնք գրեթէ հօրդայական վիճակում՝ ցիրուցան բնակւում են Հընդկաստանի մէջ, որոնց աշխարհում ծաղկում են բարոյական առաքինութիւնները, ալտրուիզմը, մարդասիրութիւնը, արդարութիւնն ու շիտակութիւնը...

Եւ այնուամենայնիւ, չենք կարող ասել, թէ այդ վերջինները աւելի բարձր են, կուլտուրայի տեսակէտից աւելի առաջացած, քան եւրոպական մարդկութիւնը, քան հռոմէական բռնապետութիւնը, քան նոյնիսկ հին Եգիպտոսը: Չենք կարող երանի տալ նախնի այն ցեղերին, թէկուզ և բարոյական ու առաքինի, չենք կարող ցանկանալ, որ մարդկութիւնը յաւիտեան գեգերէր այնպիսի հօրդային, նահապետական վիճակում, ուր մարդկային համախմբումները՝ անձար ու անօգնական՝ առանց որեւէ հասարակական կազմակերպութեան, առանց զէնքերի ու արգիւնաբերական մշակած գործիքների՝ թափառէին նախրների պէս ազատ բնութեան մէջ, մատնւած գիշատիչների յարձակումներին և բնութեան բմահաճ խաղերին...

Անշուշտ ոչ: Նախնի «բնազդային վիճակին» երանի տալու տեղիք չը կայ: Մեզ համար անհամեմատ աւելի բարձր, աւելի թանկ, գնահատելի է գիտակցական վերաբերումը կեանքի այլազան կնճիռների աշխարհում:

Վայրենի հօրդաններից մի բանիսը թո՛ղ լինին մաքուր, անկեղծ, ճշմարտասէր ու ճշմարտախօս: Բայց այդ գեղեցիկ բարոյականութիւնը—զուտ կենդանական, բնազդային—գործադրւում է սոսկ հօրդայի կամ համայնքի շրջանակներում. նրանցից դուրս, ուրիշ, օտար համայնքների անդամների վերաբերմամբ՝ կարելի է և

ստեղ ու կեղծել, և խաբել ու փրասել, և գողանալ ու զարնել... Իւրաքանչիւր համայնք ունի իր յատուկ, տեղական կամ թայֆայական դատականութիւնը, իսկ տարբեր ու հակամարտ համայնքների փոխադարձ յարաբերութեան մէջ իշխում է ընդհանրապէս Մովսիսական ղեկը՝ ընդ ականի՝ սարսափելի օրէնքը, «գոյութեան կուրի» կոյր, բնաջնոց, զուտ անասնական ձեւը, ուր ոչ մի գիտական ձայն, ոչ մի բանական քարոզ, յորդոր չի միջամտում՝ մարդկանց ուղեղներին ու սրտերին խօսելու համար, հանուր մարդկութեան ու լայն աշտրուկմի գաղափարը արծարծելու համար:

Մարդկութիւնը այն նախնական ժամանակներում երբէք չի ունեցել այն հանուր, իրէալական, հովուերգական հաւասարութիւնն ու երջանկութիւնը, որ երգում ու փառաբանում են բանաստեղծները: Որքան աւելի ենք իջնում հասարակական զարգացման սանդուխտի, այնքան աւելի ենք մօտենում մեզ ծնող անասնութեանը, այնքան աւելի է թանձրանում ստրկացնող խաւարը, այնքան աւելի է բարձրանում նախապաշարութիւնների, բիրտ ու բթացուցիչ սնապաշտութիւնների լեռը, որ ձգւում է իր զանգւածի տակ գիտակցականութեան ամեն մի նշոյլ... Իսկ առանց այդ գիտական կարգի ու թեան՝ չը կայ իսկական երջանկութիւն:

Թող, կրկնում ենք, վաղեմի մի շարք կղզիացած, նահապետական համայնքների մէջ ծաղկին Սպենսերի յիշատակած առաքինութիւնները—ճշմարտասիրութիւն, անկեղծութիւն, փոխադարձ արդարութիւն և այլն: Մեզ համար դարձեալ անհունապէս բարձր է հասարակական այն վիճակը, ուր գէթ սահմանափակ թեով անհատներ գործադրում են այդ անկեղծութեան ու ճշմարտութեան հրահանգները գիտական բար, համաձայն իրենց խղճի ու բանականութեան յորդորներին: Մեզ համար դարձեալ անհամեմատ գերադասելի է անգամ 18-րդ դարու գերմանական մարդկութիւնը, ուր մի կանա — թէկուզ մենք մենակ — հնչեցնում է «վճռական հրամայականի», կատեգորիկ իմպերատիվի հզոր, անագորոյն ու բացարձակ պատուիրանը, հռչակում է, իբրև գերագոյն օրէնսդիր՝ խղճի ձայնը, Պարտականութեան զգացումը և ինքն էլ ուզում է ապրել համաձայն իր վարդապետած փիլիսոփայութեան — «զուտ, անաղարտ բանականութեան» սկզբունքներին—երբէք չը մտնել կօպրօմիսի, իրաւախոհութեան մէջ խղճի հետ, երբէք չը կեղծել, չը խաբել, չը խարդախել... «վարել միշտ ինչպէս կուզէիր, որ ուրիշները վարէին քեզ հետ»: Ճշմարտութիւնը — ամեն տեղ և ամեն ժամանակ, ճշմարտութիւնը — անկախ ժամանակից ու տարածութիւնից, աշխարհագրական բոլոր գօտիներում, հանդէպ նեգրի, աւստրալիացու, եւրոպացու, հանդէպ բրդի, տաճկի, եգեգիի, բոլոր բանական արարածների, հանդէպ նոյնիսկ ամենաերգեալ ոսոխների... Ճշմարտութիւնը և Արդարութիւնը—բացարձակ, միահեծան, ըմբոստ ամեն «պայմանների», սահմանափակումների, «յարմարութիւնների» դէմ... ահաւասիկ այդ մօրալը, «զուտ բանականութեան» թելադրած, սրբագործած այդ վսեմ բարոյականութիւնը:

Թող այդ բոլորը լինի ցնորք: Թող կանտեան «իմպերատիվները» յաւիտենական ճշմարտութեան ու արդա-

րութեան մասին՝ լինին ուսուցիչ, անիրագործելի մեր վատաբախտ աշխարհի, մեր խուժողուժ մարդկութեան մէջ: Բայց նրանք նշան են աւելի բարձր բաղադարութեան — կ'ասենք նոյնիսկ — աւելի բարձր մարդկութեան, և այսօր լինելով հանդերձ անիրագործելի զառանցանք,—հանուր մարդկութեան վերաբերմամբ—այդ «վճռական հրամայականները», կանտեան այդ հրահանգները հանրամարդկային բացարձակ բարոյականութեան մասին՝ կոչւած են վաղ թէ ուշ իրականանալու մեր արիւնաներկ երկրագնդի վրայ, ապագայ վերանորոգւած աշխարհում, սօցիալիստական մարդկութեան մէջ, երբ կը ջնջին ստի, կեղծիքի, ատելութեան ու անիրաւութեան բոլոր հիմնական պատճառները, երբ ջինջ, պայծառ ու յաղթական բանականութիւնը կ'իշխէ տիրականօրէն բոլոր մարդանման էակների յարաբերութեան մէջ, երբ, ուրիշ խօսքով, գիտական թիւնը կը յաղթահարէ անգիտակից, բնազդապաշտ անասնութեան... Այդ թէ ուշ, այո, պիտի գայ այդ «կատեգորիկ հրամայականների» համայնաժառանգ տիեզերական յաղթանակը, քանի որ նրանք պահանջ են մարդ - գաղափարի բուն, հարազատ էութեան, քանի որ Կանտի բերնով խօսում է, յիշուի, զուտ, անաղարտ Բանականութիւնը (*die reine Vernunft*), ճոխացած, հարստացած մարդկային ցեղի դարաւոր զարգացման արդիւնքներով, իմացականութեան ու գիտակցութեան խորունկ նւաճումներով, որոնց հետքն անգամ չը կայ այն նախնական, մանրիկ ու բիրտ—թէկուզ և «առաքինի» — համայնքների մէջ:

Բարոյականութիւնը այն ժամանակ է միայն ճշմարիտ և կատարեալ, բարոյագիտական լոգունգները, նշանաբանները այն ժամանակ են միայն ստանում իրենց վեհ ու հրապուրիչ պատկերը, երբ նրանք դուրս են գալիս հօրգալի, թայֆայի, համայնքի, ազգութեան ու ցեղի սահմաններից և ընդգրկում են բոլոր անգամ մարդկութիւնը:

«Մի՛ շնիր, մի՛ գողանար, մի՛ ստիր, մի՛ սպանիր»... ոչ միայն քո հարազատ ընտանիքի, ազգի կամ ցեղի անդամների շրջանում, այլ ամեն տեղ:

Յարգի՛ր, կարեկցի՛ր, պաշտպանի՛ր ոչ միայն այս կամ այն մարդկային համախմբման անդամներին, այլ ամբողջ տառապող մարդկութիւնը, բոլոր նրանց — անկախ ժամանակից ու տարածութիւնից—որոնք կարօտ ու արժանի են յարգանքի, կարեկցութեան, պաշտպանութեան: Ահա բուն, տիեզերական և յաւիտենական մօրալը, թելադրած «գերագոյն օրէնսդիր» — բանականութիւնից, գիտակցութիւնից: Լս և այդ մօրալի տիեզերականութիւնն ու հմայքը բնաւ չեն խախտում այն հանգամանքով, որ մարդիկ սովորաբար—և շատ բնական ու հասկանալի պատճառներով—ունին իրենց նախապատուութիւնները, պիտէ քերանսները, որ իւրաքանչիւրը աւելի ջերմ սիրով ու համակրանքով կապւած էր իր ընտանիքին, իր հարազատ համայնքին ու ազգութեան:

Մարդկայինը և տիեզերականը — բոլոր խոհերի ու գործողութիւնների մէջ...

Բարոյականութեան մեծագոյն սկզբունքն այդպէս է: Այդպէս է և, կարելի է ասել, քաղաքակրթութեան աստիճանացոյց-նշաններից մինը: Քանի դեռ չը կայ

այդ վեճ սկզբունքը—մարդկութիւն էլ չը կայ, բառի լիակատար, ճշմարիտ իմաստով:

Թո՛ղ թէ նա—այդ համամարդկային սկզբունքը — շատ չի գործ ագրուում կեանքի մէջ, թո՛ղ որ նա գոյութիւն ունի սոսկ թէ օրի ա յ ու մ... Այդ ձևով անգամ՝ նա թանկագին ու պատկառելի գանձ է:

Ի՛նչ հսկայական նւաճումն էր Ֆրանսիական Յեղափոխութեան հռչակաւոր յայտարարութիւնը «Մարդկային իրաւունքներ» մասին (1789 թ.)... Ահա թէ երբ ծանուցեց—մի ամբողջ երկրի ազատատենչ մտաւորականութեան կողմից—ճշմարիտ, համամարդկային բարոյականութեան ամենամեծ սկզբունքը: «Մարդիկ ազատ ու հաւասար են»... մարդիկ, ոչ միայն Ֆրանսիական հայրենիքի մէջ, այլ ամեն տեղ, երկրագնդի բոլոր ծայրերում:

«Les hommes naissent et demeurent libres et égaux»... «Մարդիկ ծնւում և մնում են ազատ ու հաւասար» — ամեն տեղ, անկախ ժամանակի ու տարածութեան պայմաններից:

Ազատ էր հռչակւում—Գանտունների և Միրաբոների պերճախօս ու հրաբխային բերաններով — ոչ միայն Ֆրանսիական ժողովուրդը, այլ բոլոր ժողովուրդները, անկախ իրենց կաշւի գոյնից, գանգային ձուլածքներից և քաղաքակրթութեան աստիճաններից:

«Tout peuple est maître chez soi, il est légitimement égal du plus grand». «Իւրաքանչիւր ժողովուրդ տէր է իր մօտ. նա իրաւապէս հաւասար է ամենամեծին»:

Ահա թէ ինչու Ֆրանսիական Յեղափոխութիւնը հռչակեց իրօք տիեզերական ու համամարդկային Ահա թէ ինչու—գերմանացի մեծ փիլիսոփայ՝ Հեգելի արտայայտութեամբ— «աշխարհը գլխի վայր դրւեց» 1789 թւականի հսկայազոր դանուցումներով:

Աշխարհը — կ'ասենք մենք — կանգնած էր արդէն գլխի վայր. նա դրւեց օտքերի վրայ:

Սակայն, չը շեղւինք մեր տեսութեան մեծ ճանապարհից:

Մարդկութիւնը, իբրև մի հատուած տիեզերական հոյակապ շէնքի, ենթակայ է այդ տիեզերքի ընդհանուր օրէնքներին. նա շարժւում է ոլոր-մոլոր ուղիներով, ընթացող, չափաբերական ծփանքներով, մերթ դէպ՝ առաջ մերթ դէպի յետ, ընդհանրապէս դէպի առաջ, շարժւում է և բնաշրջւում, անցնելով միշտ պարզ վիճակից դէպի բարդը, համատարրից դէպի ալաւորը—նման ամբողջ տիեզերական զանգւածին:

Եւ այդ մեծ ու յամբընթաց բնաշրջական հեղեղի մէջ, մարդկային էւօլիւցիայի այդ անվախճան հոսանքում՝ լաւն ու վատը, չարն ու բարին հանդիպում են մշտապէս, գրկում իրար, խճողւում և հիւսւում մի վիթխարի ու անվերջանալի շղթայակցութեան մէջ, այնպէս որ դժւարանում էք զանազանել ու զատել մինը միւսից, բարիքը չարիքից, դրականը բացասականից:

Ահա, օրինակ, պատերազմի տիեզերական «պատուհասը»:

Մի հսկայական երկսայրի սուր:

Միանգամայն չարիք և բարիք:

Զարիք՝ իր տմարդի բնաւորութեամբ, արիւններով

ու աւերածներով: Բարիք՝ իր խթանող, առաջադիմական պաշտօնով: Գիմենք դարձեալ Ապենսերին: Ոչ որ գուցէ այնքան ներհուն գիտութեամբ չի փաստաբանել կուրի սկզբունքը, ինչպէս նա: Կուրը—դաժան, անողորմ ու աւերիչ, բայց և միանգամայն կազմակերպող ու աշխարհաշէն:

Անասնական աշխարհի մէջ, ասում է Էւօլիւցիայի մեծ թէօրիտիկոսը, կուրը համատարած երեւոյթ է և զարգացման անդուլ խթան: Կատաղի, օրհասական մրցումն է ամենուրեք: Այդ մրցման մէջ մարդւում են անհատները, ուժեղանում կամ ճարպկանում. մշակւում է բարձր տիպը: Այդ մրցման մէջ զարգանում են անհատների ու տեսակների այն բնորոշ յատկութիւնները, որոնց շնորհիւ նրանք կարողանում են յարմարւել իրենց միջավայրին և ապրել յարատեւ (la survivance des plus aptes): Ամեն մի պրօգրէս, առաջադիմութիւն, որ կատարւում է այս կամ այն անասնական տեսակի մէջ՝ ուժի, ճարպկութեան, ճկունութեան տեսակէտից՝ առաջ է բերում միւս, մրցակից տեսակների մէջ ևս այլազան ընդունակութիւններ... Մինը յուսահատ ճիգ է գործ դնում բռնելու որսը, միւսը ճգնում է խոյս տալ հաւածողի ճիրաններից... Առանց այդ անդուլ, յուսահատ ճիգերի՝ պրօգրէս չէր լինի անասնական աշխարհում: Առանց այդ աւերիչ ու արիւնահեղ կռիւների՝ պրօգրէս չէ լինի և մարդկային աշխարհում... Կուրի միջոցով է, որ նախապատմական մանրիկ համախմբումները հեազհետէ միացել են և կազմել ընդարձակ մարդկային համայնքներ. կուր շնորհիւ է, որ ծնունդ է առել հասարակական գործակցութիւնը (coopération sociale), համերաշխութիւնը միեւնոյն համայնքի, միեւնոյն ցեղի, միեւնոյն ազգի և միեւնոյն պետութեան անդամների մէջ: Մարդիկ նախ և առաջ մտածել են՝ կազմել միահամուռ յարձակման ու պաշտպանութեան սիստեմ, որից և առաջացել են ժամանակի ընթացքում հասարակական գործակցութեան այլազան ձևերը *):

Վերցնենք մի այլ «պատուհաս», որ սերտ կերպով կապւած է պատերազմ-պատուհասի հետ. ստրկութիւնը: Ստրկութիւնը՝ իր դասական, հնադարեան իմաստով:

Զարիք, թէ բարիք: Եւ այս և այն: Անշուշտ, մեր խիղճն ու բանականութիւնը ցասումով ըմբոստանում են այդ դաժան սիստեմի դէմ, ուր մարդկանց միլիոնաւոր զանգւածներ անմոռնչ, ոչխարային հօտերի պէս ենթարկւում էին մի ամենազօր տիրոջ, հրամանատարի քմահաճոյքին, զրկւում էին մարդկային ամենատարրական իրաւունքներից և քչւում դէպի գրաստի ծանր, սիզիֆեան աշխատանքներ, մտրակի ու դագանակի յաւիտենական սպառնալիքի տակ: Անշուշտ, մեր մարդկայնութեան զգացումը չի թոյլ տալիս կապելու այդ տմարդի հասարակական սիստեմի հետ բարիքի որևէ հասկացողութիւն... Եւ սակայն, այդ բարիքը կայ ստրկութեան հնադարեան կարգերի մէջ. նրանք եղան չուկէտը մեր ժամանակակից քաղաքակրթութեան, նրանք եղան առաջին հանգրւանը մտաւոր ու հոգեկան զարգացման, առաջադիմութեան:

*) Principes de Sociologie.

Արդարեւ: Կուլտուրան, գիտութիւնը, ֆիլիսոփայութիւնն ու արեւստը այն ժամանակ են սկզբնաւորուած, երբ մարդկային հասարակութիւնների մէջ առաջ է գալիս ազատ, պարագայ մի դասակարգ, որ զերծ լինելով նիւթական կեանքի հոգսերից, կարողանում է նւիրել բարձր, մտաւոր մարզանքների: Իսկ այդ ազատ ու պարագայ դասակարգը հանդէս է գալիս այն ժամանակ, երբ մուտք է գործում ստրկութիւնը, երբ, ուրիշ խօսքով, հասարակական ամբողջ մարմինը կերակուրում է ստրկացւած լէգէօնների դժնդակ ու արգասաւոր աշխատանքով: Ան, չարքաշ, ֆիզիքական աշխատանքը այնուհետեւ բաժին է մնում ստրուկներին, այն ինչ «տէրերը» արհամարհում են այն, հրաժարուում են նրանից և նւիրում իրենց ազատ ժամանակն ու կորովը մտաւոր ստեղծագործութեան: 2րդ լինէր հնագիտական ստրկութիւնը — չէին լինի և Պլատոններ, Արիստոտէլներ ու Ֆիդիասներ...

Ստրկական աշխատանք, պարագայ ու ազատ դասակարգ... Ե՛րբ են արդեօք սկիզբ առել նրանք, ե՛րբ և ի՞նչ պարագաներում: Ո՞վքեր են նախահայրերը այդ ազատ դասակարգերի, որոնց ծոցից աշխարհ են եկել գիտութեան, փիլիսոփայութեան ու գեղարւեստի պարծանք-հանձարները: Ո՞վքեր են... բիրտ, գոհճիկ հրոսակապետներ, աւազակներ, աւարառուներ... Ահա մէկը սօցիալօգիայի, ընկերագրանութեան բազմաթիւ և ուշագրաւ «կուրիօզ» ներքից:

Ինչպէ՞ս են ծնունդ առել առաջին «տէրերը»... «Դիպուածը», պատահարը այդտեղ ևս խաղացել է իր դերը, ինչպէս մարդկային զարգացման, էւոլյուցիայի ուրիշ աշխարհներում: Նախապատմութեան այն անդրագոյն, անյիշատակ շրջաններում որեւէ տեղ, որեւէ ժամանակ, որեւէ դիպածով կամ թէ շնորհիւ իր ուժի ու խելքի, ճարպկութեան, իր հնարած լաւագոյն գործիքների՝ մի անհատ տէր է դարձել համեմատաբար մեծ գոյքերի, արդիւնքների, կենսական պիտոյքների: Մի մասը գործածել է անհատապէս, միւս մասը, աւելորդը, բաշխել է ուրիշներին և բաշխել է ոչ ձրիաբար, այլ որոշ աշխատանքի ու ծառայութեան փոխարէն: Ահա նա — «տէր», չահագործող, եթէ կուզէր կապիտալիստ:

Աւելի յաճախ եղել է այն՝ որ մի յանգուգն արկածախնդիր, մի աւազակ, հրոսակապետ, մի բուռն կտրիճներ հետն առնելով, արշաւել է աջ ու ձախ, նետել թողլ անպաշտպան մարդկային համախմբումների վրայ, ջարդել է, զաւթել ու գերեզմարել և ապա յաղթողի ու յաղթուողների միջև կապել է մի տեսակ դաշինք, որով զոհերին կեանք է պարգւել, պայմանով՝ որ նրանք մտնեն տիրոջ, յաղթողի հպատակութեան, ծառայութեան մէջ և աշխատեն ու արդիւնաբերեն նրա համար, իբրեւ ստրուկ, ստանալով իրենք այնքան, որքան անհրաժեշտ է՝ մի գրաստային կեանք քարշ տալու համար: Այդքանն էլ «վաստակ» էր, քանի որ աւելի առաջները, հասարակական էւոլյուցիայի աւելի ստորին աստիճանի վրայ՝ յաղթողները սովորաբար մորթում էին գերի բռնաւորներին, ոչնչացնում կամ լափում...

Ստրուկները գործի դիմելով, ազատում են յաղթող տէրերին ֆիզիկական սև աշխատանքից, այդ բիրտ, գոհճիկ աւազակապետներն ու թաւանջիները, հողերի

ու ստրուկների նւաճողները այդ վայրկեանից ի վեր «ազնւանում են», բարձրանում, առանձնաշնորհալ դիրքեր գրաւում, նրանք դնում են «արիստոկրատիայի», ազնւականութեան սաղմերը և նրանցից սերնդէ-սերունդ առաջանում են թագաւորների, իշխանազուկների և ամեն տեսակ «ազնւիւների» տոհմերն ու գերդաստանները, աշխարհի բոլոր ծայրերում, գրեթէ բոլոր մարդկային համայնքների մէջ:

Երբ ստրուկների բազմամիլիոն դասակարգը, բերած յաղթական պատերազմների դաշտերից, լծւեց անարգ, անասնական աշխատանքին Յունաստանի, մասաւանդ Հռոմի հսկայածաւալ հողերի վրայ, ի՞նչ էր մնում անել կացութեան տէրերին, բայց եթէ գործադրել իրենց մարդկային կորովը ուրիշ կարգի մարզանքների մէջ... Իսկ ահա նրանք մի կողմից անձնատուր էին լինում սանձարձակ զւարճամուլութեան, ցոփ կեանքի խրախճանքներին — որոնց հետքերը մինչև օրս էլ կարելի է տեսնել Պոմպէի կիսափլատակ շէնքերի մէջ, Հռոմի հրապարակներում — միւս կողմից այդ պարագայ, սև, «անպատիւ» աշխատանքից ազատագրւած դասակարգը ի դէմս իր ընտիր փոքրամասնութեան զարգացնում էր կուլտուրան, մղում էր գիտութիւն, արեւստ, փիլիսոփայութիւն...

Այդպէս է ահա մարդկութեան էւոլյուցիայի մէջ լաւը հիւսւում վատի հետ, բարիքը՝ չարիքի, դրականը՝ բացասականի հետ:

Մարդկութեան բարոյական պատկերը ևս մի բան վաստակում է ստրկութեան սիստեմի կիրառութեամբ: Ասացինք արդէն, որ նախ քան այդ սիստեմը, պատերազմների մէջ յաղթւածները կոտորուում էին: Այժմ գէթ խնայւում է նրանց կեանքը — մարդու ամենաբաղցր, ամենաթանկագին ստացւածքը: Ուրիշ հանգամանք: Հարկ կայ երկարօրէն խօսելու այն մասին, թէ ինչպէս բարոյական մի շարք գծեր — արիւթիւն, ասպետութիւն, անձնազոհութիւն և այլն — մշակւում են դարձեալ միայն այն ժամանակ, երբ ստեղծւում է հասարակութեան մէջ այդ ազատների դասակարգը, որի մի մասը շարունակաբար մարդու է պատերազմներում և կեանքի այլ ասպարէզներում: Բարոյական այդ գծերը զարգանում են առանձնապէս միջնագրեան մարդկութեան մէջ:

Արջապէս ո՞վ չը գիտէ, որ առանց մարդկային պատմութեան այդ բոլոր զուլումների, արհաւիրքների, առանց աշխարհակուլ պատերազմների և արիւնոտ արկածների, առանց այդ անդուլ բռնակալական սարսափների, ստրկութեան ու ծովածաւալ թշուառութեան՝ չէին ծնւի հերոսները պատմութեան մէջ, չէին առաջ գալ տառապող ու փոթորկող ազգերի ծոցում ստեղծագործող հանձարները, լացող ու երգող բանաստեղծները, արձանագործները, նկարիչները և այլն:

2րդ լինէին միջնագրեան գուէլֆ-գիբելինեան արիւնահեղ կռիւները իտալական Ֆլորենցիայում, չը լինէին այդ երկրի ուրիշ դժբախտութիւնները յետագայ թաւաններում, — մարդկութիւնը գուցէ չունենար երկու տիրական հանձարներ բանաստեղծութեան ու արեւստի մէջ՝ Դանտե և Միքել Անջելօ — մէկի ահեղ, պոետապատում գրիչը, միւսի տիտանեան վրձինը...

Այդպէս է տիեզերական էւօլիցիայի գաղափարը։
Նոյնը չէ՞ արդեօք հայկական կեանքում... Չը լինէին մեր դարաւոր զուլումները, որ աւերիչ ցիկլոնների պէս եկել անցել են մեր բազմատանջ հայրենիքի վրայից — մենք չէինք ունենայ ոչ մեր հերոսների պայծառ, լուսաւոր բոլբոլը, ոչ էլ նրանց փայլուն ու խանդավառ երգիչները—եղիշէներ, Պատկանեաններ, Ահարոնեաններ ու Սիւմանթոներ... Առանց հերոսութեան՝ չի բանաստեղծութիւն *)...

Եզրակացնենք։ Մեր նպատակն էր ցոյց տալ մոլորութիւնը այն ընկերաբան-մտածողների, որոնք բռնած մի անյոյս ու ցաւագար յոռետեսութեամբ, անիծում են պատմութեան ընթացքը, անիծում են պատերազմներն ու ֆէօդալական, բռնակալական աւարտենչ աշխարհակալութիւնները, անիծում են և ողբում, որ բաղաբաշխութեան անիւղ եկաւ կործանեց «հին, բարի ժամանակների» համայնական, հովերգական առաքինութիւնները, աշխուրհիմն ու բնածին հաւասարութիւնը և տարածեց էգոիզմի ու ապականութեան թոյնը աշխարհի բոլոր ծայրերում։

Այդպէս չէ դատում պաղ, օբ'եկտիվ, առարկայական գիտութիւնը, հասարակական գիտութիւնը։ Ահա նրա հսկայ ռազմիրայի, նրա մեծագոյն հիմնագրի յայտարարութիւնը այդ առթիւ.

«Անտարակոյս, չէ կարելի արդարացնել տիեզերական այդ անտափօնիզմի պատճառած սարսափները.—անտափօնիզմ՝ որ սկսւելով տաս հազար տարի սրանից առաջ համայնքների մշտնջենաւոր ընդհարումներով՝ յանգել է մեծ ազգերի մեծ պատերազմներին։ Պէտք է սակայն խոստովանել, որ առանց այդ սարսափների՝ աշխարհը տակաւին բնակած կը լինէր միայն թոյլ տիպի մարդկանցով, որոնք կը փնտռէին իրենց ապաստանը բարանձաւներում և կը կերակրւէին գարշ նիւթերով **):

Գրեթէ նոյն եղանակով էր բնում պատմութեան պրօցէսը մի այլ հսկայ, էւօլիցիոնիզմի (Ջարգացման թէօրիայի) ամենախոշոր ռազմիրաներից մինը, փիլիսոփայ Հեգելը։ Ինչ որ կատարւել է պատմութեան դարաւոր գործողութեան մէջ, եղել է անհրաժեշտ, և իբրեւ այդպիսին՝ եղել է բանաւոր, խելացի։ «Was wirklich ist, ist vernünftig»։ «Ինչ որ իրական է, բանական է»...

Կրկնում ենք, դժւար է հաշտւել այդ տեսակ հայեացքների հետ, մեր խիղճն ու գիտակցութիւնը ծառանում են ընդդէմ այդպիսի մեղմարար գնահատումների՝ հանդէպ պատմական արհաւիրքների, աշխարհաստան պատերազմների ու զուլումների։ Բայց այնուամենայնիւ, թւում է թէ ընդհանուր առմամբ ճիշտ են հեգելեան և սպենսերեան ֆորմուլները...

Հտապենք աւելացնել, իբրեւ պատմութեան փիլիսոփայութիւնն ու հասարակական գիտութիւնը Հեգելների ու Սպենսերների բերանով հռչակում է պատ-

մական մեծ պրօցէսի *) բանաւորութիւնը (խելացիութիւնը), երբ նրանք գտնում են, որ մարդկային ցեղը իրեն ծնող անասնութեան պէս դարձրած զուլումակ պատառուտել է գոյութեան կռուի յորձանքներում, պատերազմների, բիրտ էգոիզմի ու իրարաջնջման սարսափների մէջ, — նրանք չեն ուզում ասել դրանով, որ այդ դաժան գոյամարտի արհաւիրքները պիտի յարատեւեն յաւիտենօրէն, որպէս մի տեսակ տիեզերատուր, ճակատագրական պատուհաս։ Ոչ։ Ապագան չը պիտի նմանի անցեալին և ներկային. էւօլիցիայի տարրալուծող ու ազնւացնող հոսանքի մէջ գոյութեան կռուի պիտի փոփոխի և արդէն իսկ փոփոխում է իր ձեւերը. գաղանը հետզհետէ նսեմանում ու նահանջում է մարդու, գիտակցական էակի յարաճուն գրոհի առջև... Ինքը մեծ բնագէտը, Չարլզ Դարվին, պատմելով հանգերձ տիեզերական անողորմ գոյամարտի (Struggle for life) սարսափները անասնական և բուսական աշխարհների վերաբերմամբ՝ ընդունում էր, որ մարդկութեան մէջ, շնորհիւ գիտակցական տարրի միջամտութեան, այդ գոյամարտը հետզհետէ պիտի մեղմանայ ու պիտի տեղի տայ աւելի բարեկիրթ, մարդավայել պայքարների։ Իսկ Սպենսեր, «հասարակագիտական Դարվինը», այսպէս ամփոփեց իր հայեացքը՝ այդ ծանր կնճռի վերաբերմամբ.

«Գոյութեան կռիւ» հասարակութիւնների մէջ լինելով մինչև օրս անհրաժեշտ պայման էւօլիցիայի՝ յաւիտենական չը պիտի պահպանէ իր կոշտ ու վայրագ բնաւորութիւնը... Մենք խոստովանում ենք, որ պատերազմներին ենք պարտական՝ մեծ հասարակութիւնների առաջացումը և նրանց օրգանների զարգացումը, բայց մենք կարող ենք եզրակացնել, որ ձեռք բերւած ուժերը, որոնք կիրարկւում են այժմ ուրիշ հասարակական ֆունկցիաների համար, յետոյ պիտի կորցնեն իրենց նախնական դերը։ Մենք ընդունում ենք, որ առանց այդ յարատեւ, արիւնոտ կռիւների՝ բաղաբաշխութեան պատմութիւնները չէին կազմակերպւել և որ կռուի այդ վիճակը պէտք է անհրաժեշտաբար ունենայ իբրեւ լրացուցիչ՝ մարդու բնաւորութեան համապատասխան ձև—նոյնքան անգթութիւն, որքան խելք։ Բայց դրա հետ միասին իրաւունք ունենք պնդելու, որ այդ հասարակութիւնները կազմակերպւելուց յետոյ՝ նրանց բնաւորութեան վայրագութիւնը — անհրաժեշտ պայմանը այդ կազմակերպման պրօցէսի—պիտի չքանայ... Այդ շրջանի ծնունդ՝ հասարակական և անհատական չարիքները աստիճանաբար պիտի նւազին ու անհետանան։ Գոյութեան անողորմ պատերազմը պիտի տեղի տայ հետզհետէ՝ կամաւոր գործակցութեան (coopération volontaire) և դրա հետ զուգընթացաբար պիտի նւազի պետութեան ֆունկցիան, պաշտօնավարութիւնը, պիտի կրճատւի աստիճանաբար կառավարչական միջամտութիւնը անհատների գործերի մէջ, պիտի հասնի իր ծայրագոյն minimum-ին, պիտի դառնայ ի վերջոյ... գրեթէ աւելորդ... «Անհատը ընդդէմ պետութեան»...

*) Հերոսութեան աղբիւրներ, հարկաւ, չր պիտի ցամփն ապագայում, երբ կը վերանան աշխարհից մարդկային զուլումները։ Հերոսութիւնը գալից դուրեւում պիտի ցոյայ նաեւ խաղաղ մրցման գրկում, բնութեան անեղ ուժերի դէմ մղելիք հսկայ պատերազմի, սեփական, արեւսի ու գիտութեան մէջ...

**) Հերբերս Սպենսեր, «Հասարակագիտութեան հիմունքներ»։

*) Processus, բնագիտ. գործողութիւն։

Ահա սպենսերեան աշխարհահռչակ ինդիվիդուալ լիզմը, անհատապաշտ վարդապետութիւնը, որ հասնում է երբեմն գրեթէ մինչեւ անարխիզմ (անիշխանականութիւն *):

Եւ սակայն չը պէտք է կարծել, թէ Սպենսեր իր «կամաւոր գործակցութեան» թէորիանով, իր կատարի ժխտումներով պետութեան ու կառավարութեան միջամտութիւններին, իր «վարչական նիշիլիզմով» (ինչպէս որակում է անգլիացի հռչակաւոր բնագետ Հէքսլի) — չը պէտք է կարծել, թէ Սպենսեր իրօք անարխիզմի ու սոցիալիզմի ջատագով է, մարդկանց հաւասարութեան պաշտպան:

Ընդհակառակը, նա անհատապաշտութեան փաստարան է և բուրժուական գիտնականների աշխարհում՝ գուցէ ամենամեծ հակառակորդը բոլոր «հաւասարացնող» վարդապետութիւններին բնութեան մէջ, ատում է նա, կան ընտրեալներ և ոչ ընտրեալներ, կան ուժեղներ, առանձնաշնորհներ և կան թոյլեր, ճշնշտաձեւներ, «յարմարելու» անընդունակներ... Այդպէս է և մարդկային հասարակութեան մէջ:

Դարձիւնի վարդապետութիւնը, փոխադրելով սոցիալօգիայի, հասարակական գիտութեան գիրքը, այդպիսով պատնէշ է դրում սոցիալիզմի և բոլոր միւս հաւասարացնող թէորիաների յաւակնութեան դէմ...

Տեսնենք, սակայն, թէ որքան հիմնաւոր ու բանաւոր է այդ հակադրութիւնը:

*) Մի վարդապետութիւն, որի նպատակն է իսպառ ոչնչացնել պետութեան ու կառավարութեան բոլոր ձեւերը և հաստատել «անկառավարական» կամ անիշխանական հասարակակարգ:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Վիտապաճարի Կովիսէէն ստացած է՝

1905 յունւար 1-էն մինչեւ օգոստոս 31 1909.—Հետեւեալ խումբերէ՝ Վիտապ 424 դր., Երկաթ 469. 20, Վրէժ 511. 30, Հուր 99, Տիգրիս 507, Փայլակ 411, Էդմանասար 188, Նորակազմած Լոյս 188. 20, Արծիւիկ 144. 20, Հերոս 110, Աղծնի 444. 20, Սուր 310. 20, Կայծակ 97 դր.: Դումար 3905 դր. 10 փաբա:

Դուսիսէի Ենթակովիսէէն՝

1910 յունւար 1-էն մինչեւ ապրիլ 1.—Անանիս խմբ. 265 դր., Յաւաչ 75, Զարփի խմբ. 3. Մ. 16, Մ. Խ. 10, Ռազմ խմբ. Ա. Շառլ. 12, Մ. Գլ. 10, Նպասակ, Երկաթ և Կորիւն խումբերէ 1909 տարւոյ յետմնացէ 155: Դումար 543 դր. ողջ:

Պալմանեան Կեդր. Կովիսէէն՝

Ֆիլիպէի Կովիսէէն.—Հետեւեալ խումբերէ՝ Պասանեաց Վառան Մանուէլեան 100 ժրանկ, «Դրո» 73, Հերոս-Գալիկ 31, Արամեան 31. 50, Արեւելեան Տէրօր 15, Բիսապիտ-Պեսո 33, օրիորդաց Կարմիր խաչ 17. 50, Տէրօր 33. 50, Վազգէն 8, Զանազան հրաւարակութիւններէ 2. 35, Ներկայացումէ 289. 60, Դրո խմբէ 23, Դրո խմբէ 80. 50, Եւ 40. 50, Հերոս-Գալիկ 21, Բաբկէն-Սիւնի 77. 50, Տէրօր 25, Դրո խ. 35, «Դրոսակի» բաժնեկիներէ 102, ծախած գոյներէ 40, Սոժիայի խումբերէն 75: Դումար 1153 ժր. 95 ա.:

Պուրկիւր Կովիսէէն.—Հետեւեալ խմբերէ՝ Անդրանիկ 70 ժր., Եփրատ 71, Պեսո-պուլկարացի 99, Սասուն 39, Արաբո 81: Դումար 360 ժրանկ:

Վառնա Վի Առժամեայ Մարմնէն.—Հետեւեալ խումբերէ՝ Կուկունեան 13 ժր., Եւ 17, Եւ 10, Յաւաչդիմական 5, Եղիշէ Թոփչեան 15, Եւ 5, Եւ 20, Առիւծ 8, Բիսապիտ խմբ. զանազանից 1. 70, հրաւարակութ. 20. 70, Մ. Եւ Ն. 14: Դումար 129 ժր. 40 ա.:

Սիլվէի Կովիսէէն.—Քարաբուճար-Աղբիւր խմբէն 21 ժր., Եւ 29, Պեսո խ. 20: Դումար 70 ժր.:

Քոնստանտին Կովիսէէն.—Անդրանիկ խմբէն 38 ժր.,

Դեւեան խ. 54, Զորականց 75, Աղվարդ 33, Հրաւարակութիւններէ 93. 80, Եփրատ 72, Սերոբ-Աղբիւր 96, Վեռնոյեան 56: Դումար 517 ժր. 80 սանիւ:

Պրայիլի Կովիսէէն.—Մեհարանի հասոյթէ 746 ժր. 60 ա., Ագուլի խմբ. 57, Եփրատ խմբ. 85, Դուրգէն խ. 18, Տարօն խ. 36, Զանազաններէ նւերներ 56 ժր.: Դումար 998. 60 ժր.:

Ռուսնոյ Կովիսէէն.—Հրաւարակութիւններէ 27 ժր., Մարօ կանանց խմբ. 21, Ռաւ խմբի հին հաւելն 15, ճուրճոյայի Մոկուն խմբէն 30 ժր. Եւ 33 ժր. քնկերներէ անգլաւաճար հաւաքիչներու ձեռամբ 154. 90 ժրանկ: Դումար 280 ժր. 90 սանիւ:

Ղեկնաւոր զումար 3510 ժրանկ 65 սանիւ:

Քարծր-Ռեդի Կեդր. Կովիսէէն՝

Ռուսնոյ Ենթակովիսէէն՝ 1908 հոկտեմբերէն 1909 յունւար.—Հետեւեալ գիւղերու խումբերէն՝ Կեսափ գիւղի Ռազմիկ Եւ Եսանեակներ 92 դր., Այծեղջիւրէն տուգանք 51. 50, Վառն գիւղի ժիւրայ 51. 50, Դոժիւ 44, Արծիւ 48, Հալկ 40, Կայծակ 53, Ռեւիս 18, Արմէն գիւղի Շառլ 14. 75, Կրակ 12, Դիւցազն 13, Արաւիւր 11. 50, Վառարան 9, Կապար 13, Քարայր գիւղի Փայլակ 28, Իմակ 26. 50, Վրէժ 28. 50, Յոյակ 26. 50, Երիտաւար 20, Կայծակ 24. 50, Մեհարան գիւղի Կայծակ 22, Թիփի-բորան 11, Միջնորդ գիւղի Տափ-բոր 11. 50, Զարբերդ 12, Արամ-Թաքուլ 12. 50, Արմաս 10. 75, Նորածին 10. 50, Վառն 9. 50, Սաչ գիւղի Յոյակ 300, Քաւոր գիւղի Մարս 11, Յանկոյս 9. 25, Սաչ գիւղի Յոյակ 42, Սլաւ 12, Խաչափայտ գիւղի Վազոդ 11, Պասանի 10, Մեհարան գիւղի Փայլակ 14. 50, Իրադիկ 4, Բերդ գիւղի Երեւոյ 30, Բզնունի 30, Վիտապ 30, Ռազմիկ 10, Արաւան գիւղի Թիփի-բորան 150, Բոզոն 101 Վառն-կրակ 18. 50, Առնոս 37. 50, Շապուր 48, Վառն 16, Դոժիւ 78, Յոյակ 44, Թիփի-բորան 19, Հրաբուլ 11, Հուր 8, Շառլ 20, Թաքուլ 8, Արամ 4, Դոժիւ 270, Շապուր 265, Վառն-կրակ 240, Առնոս 154. 50, Զարեհ 246, Զարեհ 42, Թիփ-խաչ գիւղի Շեռաւ 26, Կայծակ 20, Հոյնի 7, Ժայռ գիւղի Անդրանիկ 16. 50, Մեհարան 30, Ալի 27, Լուսին 9, Վառն գիւղի Արամ 51, Բերդ-գիւղի Բզնունի 485, Երեւոյ 15: Դումար 3705 դր. 75 փ.:

Շաւիղ Ենթակովիսէէն՝ 1909 ապրիլէն 1910 փետրւար.—Հետեւեալ գիւղերու խումբերէն՝ Քարաբուճար գիւղի Բանուր 11 դր., Ջերմուկ գիւղի Աւազակ 12. 5, Կարմուր գիւղի Կրակ 11, Ռեհնակ 11, Իսլակ 10. 5, Ռազմիկ 8, Կայծ 13, Ջերմուկ գիւղի Ռազմիկ 10, Արաւան 6, Քարաբուճար գիւղի Առիւծ 9, Կարմիր ֆար գիւղի Պաղի-սէն 10, Ջէյրուն 8, Անառիկ 8. 5, Մկրաս 4, Միւրքիւն 8. 5, Կարմուր գիւղի Ռեհնակ 11, Կայծ 13, Կրակ 9, Կայծակ 12, Ռազմիկ 8, Քարաբուճար գիւղի Բանուր 10, Առիւծ 9, Կարմիր ֆար գիւղի Բաբկէն Սիւնի 10, Ջէյրուն 8, Անառիկ 8. 5, Մկրաս 4, Միւրքիւն 8. 5, Քարաբուճար գիւղի Բանուր 10, Առիւծ 9, Կարմուր գիւղի Հալկ 9. 5, Կարմիր ֆար գիւղի Ջէյրուն 24, Բաբկէն-Սիւնի 31. 5, Անառիկ 25. 5, Մկրաս 12, Միւրքիւն 25. 5, Քարաբուճար գիւղի Բանուր 22. 5, Առիւծ 18, Բազնունի 9, Կապան գիւղի Քաչ 84, Կարմուր գիւղի Հալկ 21, Ռազմիկ 24, Կայծ 39, Ռեհնակ 33, Փայլածու 31. 5, Կրակ 27, Փայլակ 21. 25, Ջերմուկ գիւղի Աւազակ 54, Մոսին 50, Ռազմիկ 40, Երկաթ 46, Արաւան 59, Երկաթ 8, Կապան գիւղի Քաչ 56, Հազար 12, Ջերմուկ գիւղի Աւազակ 27, Ռազմիկ 40, Աւազակ 54: Դումար 558 դր. 75 փաբա:

Դիւեակ Ենթակովիսէէն՝ 1908 դեկտեմբերէն 1909 դեկտեմբեր.—Հետեւեալ գիւղերու խումբերէն՝ Սեւ ֆար գիւղ 36 դր., Նոյն գիւղի վեց խմբերէ 45. 5, Կարմրակ Եւ Ժայռ գիւղերու 2 խմբերէ 22, Արմն գիւղի Արծիւ 8. 5, Տէրօրիս 19, Թուրքիկ 11. 25, Ասրանակ 11, Հրաւանգ 14, ձգնաւոր 12. 5, Խան 13, Կորիւն 15. 5, Հայրենիք 11. 25, Երեւոյ 16. 5, Սեւ ֆար գիւղի Հաւասար 7. 5, Ոսկի վրայ 8. 25, Հուրիք 7, Սանամարուրիւն 10. 5, Քաչ 6. 5, Յոյս 7. 75, Սէր 8. 75, Ազատութիւն 10. 5, Եղբայրութիւն 9, Ծովասար 5, Կարմրակ գիւղի Թուրքիկ 11, Ժայռ գիւղի Սուրհանդակ 11, Արմն գիւղի ձգնաւոր 12. 5, Դերմանակ 10, Թուրքիկ 11. 25, Արծիւ 9. 5, Երեւոյ 16. 5, Կորիւն 15. 5, Տէրօրիս 19, Հրայր 12, Խան 13, Հայրենիք 11. 25, Արծիւ 9, Կարմրակ գիւղի Հալկ 10. 5, Ժայռ գիւղի Սուրհանդակ 12, Սեւ ֆար գիւղի Պաճար 3. 75, Հուրիք 5, Ազատութիւն 8, Սէր 7. 75, Ոսկի վրայ 5. 75, Եղբայրութիւն 8. 5, Հաւասարութիւն 6, Նորմիս 3. 75, Սասանիչ 3. 5, Արմն գիւղի ձգնաւոր 6. 75, Կորիւն 8, Տէրօրիս 9. 5, Սեւ ֆար գիւղի Սէր 10, Եղբայրութիւն 8, Հաւասարութիւն 7. 5, Կարմրակ գիւղի Հալկ 21, Ժայռ գիւղի Սուրհանդակ 24, Արմն գիւղի Երեւոյ 7. 5, Թուրքիկ 5. 75, Ասրանակ 5, Հայրենիք 6. 75, Եւ 6. 75, Ասրանակ 5, Թուրքիկ

5. 75, Եղգնաւոր 6. 75, Կորիւն 8, Տէրօրիւս 9. 5, Իւրուկ 7. 5, Տէրօրիւս 9. 5, Իւրուկ 7. 5, ձգնաւոր 6. 75, Ասրեանակ 5, ձգնաւոր 6. 75, Կամրասակ գիւղի Թոյուն 10. 5, Ժայռ գիւղի Սուր 12, Արմն գիւղի Արծիւ 30. 30, Տէրօրիւս 98. 25, Հայրենիք 27, Իւրուկ 30, Տէրօրիւս 68, Արծիւ 19, ձգնաւոր 20. 25, Հայրենիք 33. 75, Թոյունիկ 54. 5, Խան 60. 5, Կորիւն 16, ձգնաւոր 27, Կորիւն 67. 5, Ասրեանակ 40, Հայր 49. 5, Սեւ Բար գիւղի Սահմանադրութիւն 42, Հուրիւք 20, Ազատութիւն 30, Փայլակ 25, Ոսկի վրայ 20, Նորմէսիւր 20: Գումար 803 դր. 75 փարա:

Ճ ա ռ ա զ ա յ թ Ենթակոմիտէն՝ 1908 դեկտ. — էն 1909 դեկտ. — Հետեւեալ գիւղերու խումբերէն՝ Բաղքիկ գիւղի Հրաբուխ 17 դր2, Ովասիս գիւղի Հապտեր 9, Զօրան, Տիգրան, Գրիգոր 11. 75, Թաղէտ, Ալեքսան, Նիկողայոս 10, Բաղքիկ գիւղի Երկաթ 8. 5, Վիշապ 11, Դոնիք 12. 5, Ժաղկածոր գիւղի Լոյս 7. 5, Ժայռ 15. 75, Բօք 7. 5, Լեռ 6. 75, Երիտասարդ 5. 75, Բաղքիկ գիւղի Որոտ 9. 75, Եօթվանք գիւղի Նեմրուծ 14, Տէլիպապա 10, Պինկէօլ 11, Հրայր 14, Ենդլիկ գիւղի Ատրճանակ 14, Կամք 12, Հրայր 7, Բամի գիւղի Արիւն 16. 25, Հրացան 5. 25, Նիզակ 7, Կտրող 10. 25, Բաղքիկ գիւղի Թումանով 12, Խորխոռունի 13, Մարտիկ 15, Թումանով 12, Մարտիկ 13, Վաթման 15, Խու 15, Դաշոյն 13, Հողագործ 9. 5, Զավուշ 10, Բիծա 13. 5, Սահմանադրութիւն 7. 5, Բարակուի 14. 5, Ազգ 14, Հրաբուխ 10, Բրիտանիա 12, Գուրգուշան 13, Աւազակաց 11, Դոնիք 8. 5, Խորխոռունի 10. 5, Բրիտանիա 7. 5, Վիշապ 8, Աւազակաց 9, Դաշոյն 8. 5, Եօթվանք գիւղի 4 խմբերէն 29. 875, Ենդլիկ գիւղի 3 խմբերէն 18, Ժաղկածոր գիւղի 5 խմբերէն 49. 5, Ովասիս գիւղի 6 խմբերէն 42, Բաղքիկ գիւղի 12 խմբերէն 89, Ժաղկածոր գիւղի Լոյս 9, Ժայռ 14. 5, Լեռ 11, Բուք 10. 5, Երրորդ 8, Բաղքիկ գիւղի Գուրգուշան 21, Դրօշակ 13, Խորխոռունի 30, Դոնիք, 25. 5, Ազգ 24, Վիշապ 22. 5, Հողագործ 22. 5, Ովասիս գիւղի Կրակ 6, Ալեքսան 6, Բաղքիկ գիւղի Հրաբուխ 20, Բիծա 25. 5, Ենդլիկ գիւղի Ատրճանակ 21, Կամք 18. 5, Ժիրայր 16. 5, Եօթվանք գիւղի Նեմրուծ Եւ Տէլիպապա 23. 5, Ժիրայր 23. 5, Պինկէօլ 23. 5, Բամի գիւղի Դրացան 17, Կտրող 15, Նիզակ 9, Արիւն 8, Բուք խմբերէն 21, Ովասիս գիւղի Ազատ 10. 5, Բաղքիկ գիւղի Երկաթ 19. 5, Զավուշ 23. 25, Աւազակաց 27, Վաթման 29. 5, Դաշոյն 25. 5, Բարակուի 13, Որոտ 17. 5, Մարտիկ 12, Դոնիք 17, Դրօշակ 14, Ովասիս գիւղի Ազատ 10. 5, Հապտեր 20, Եօթվանք գիւղի Ժիրայր 21, Նեմրուծ 21, Պինկէօլ 15, Ենդլիկ գիւղի Ատրճանակ 21, Ժիրայր 16. 5, Կամք 16. 5, Ժաղկածոր գիւղի Լոյս 10. 5, Ժայռ 14. 25, Լեռ 14. 25, Բուք 15. 75, Բաղքիկ գիւղի Գուրգուշան 24, Դրօշակ 12, Բրիտանիա 38. 5, Դոնիք 9. 5, Մարտիկ 36, Խորխոռունի 30, Աւազակ 27, Հրաբուխ 39, Գումանով 39, Բարակուի 34, Վաթման 28, Սահմանադրութիւն 40, Ազգ 24, Որոտ 17. 5, Վիշապ 25. 5, Դաշոյն 26, Բիծա 26. 75, Հողագործ 25. 5, Երկաթ 22. 5, Եօթվանք գիւղի Տէլիպապա 25, Նեմրուծ 14, Ժիրայր 12, Պինկէօլ 10. 25, Բամի գիւղի Նոր խումբ 14, Կտրող 36, Նիզակ 36, Հրացան 18, Ժաղկածոր գիւղի Լոյս 19. 5, Ժայռ 26. 25, Լեռ 14. 25, Բուք 13. 5, Երիտասարդ 25. 5, Բամի գիւղի Արիւն 16, Բաղքիկ գիւղի Զավուշ 24. 5: Գումար 142 դր2. 5 փարա:

Ո Ր Ս Ո Ր Դ Ենթակոմիտէն՝ 1909 սեպտ. 1909 դեկտ. 31. — Հետեւեալ գիւղերու խումբերէն՝ Բրակ գիւղի Փայլակ 40 դր2. 5 փարա, Կայծակ 94. 5, Սարսափ 76. 5, Խաչափայտ գիւղի Հրաշ 71, Բալանիւծ 77, Գոլումպոս 65, Զէմի 85, Վազող 54, Պատանի 55, Թէք-Խաշ գիւղի Կայծակ 45, Հրդեհ 24. 5, Երրակ 65, Բերդ գիւղի Բզնունի 102, Վիշապ 80, Ժերուկ 78, Ռազմիկ 83, Արշաւան գիւղի Վառ Կրակ 67. 5, Զարեհ 77, Վառ 22. 5, Խու 45, Թաթուլ 34, Եապուհ 75, Հրաբուխ 72, Հուր 34, Հարեհ 21, Բողոք 77, Արամ 16. 5, Եանի 33. 5, Գետաւ 11. 5, Դոնիք 97, Աշոտ 64. 5, Թիփի պօրան 13. 5, Զուլակ 5. 5, Հարեհ 22, Վառ-Կրակ 15, Վառ 15, Եապուհ 17, Հրաբուխ 8, Ազատ 14, Հուր 4. 5, Թաթուլ 13, Արամ 4, Եանի 7, Սեպուհ 14, Թիփի-պօրան 3: Գումար 436 դր2. 5 փարա:

Բ ա Ր Ժ Ր Ե Ր Դ Ի Տեղ. Կոմիտէն՝ 1909 յունւարէն 1910 փետրուար. — Հետեւեալ խումբերէն՝ Արաքս 207 դր2, Այրողք 30, Վարդգէս-Գիսակ 120, Լոյս 60. 5, Վարդապետ 10, Կոռուի 18, Մշակ 25, Աշոտ-Թաթուլ 88, Փայլակ 84, Աւիւն 23, Արաքս 69, Աշխատանք 24, Ուսուցիչներէ 110. 25, Կոռուի 58, Կայծակ Բ. 126, Պողպատ 32, Լոյս 26. 5, Փայլակ 64, Թաթուլ-Արամ 90, Դոնիք 124, Ազատ 40, Կոռուի 54, Նոր-սեբունդ 64. 5, Փարոս 21, Պողպատ 14, Վարդապետ 10, Սեւ-քար 60, Ազատական 14. 5, Արծիւ 144, Պողպատ 16, Այրողք 60, Կոռուի 58, Արաքս 69, Բրիտանիա 19. 5, Նոյն խմբի երկու ընկերներէ 20, Ժառ-Մահացու 197, Նալճիններու Միութիւն 20. 25, Միաճիններու Միութիւն 15. 25, Խոնթ 35, Հազրէ 48. 5, Լոյս 33, Միաճիններու Միութիւն 16. 75, Բերդ 40. 5, Կոռուի 17, Այրողք 30, Արմատ 41, Ակունք 22, Թաթուլ-Արամ 45, Սեւ-քար 11, Մշակ 16, Ազատական 14. 5, Աւիւն 10, Հրայր 63, Աշոտ-Թաթուլ 64, Նոր-սեբունդ 15, Վարդապետ 10, Պողպատ 16, Բրիտանիա 19. 5, Բերդ 40. 5, Նոր-սեբունդ 15, Կոռուի 17, Վարդապետ 12, Բրիտանիա 39, Կոռուի 34, Ազատ 20, Վարդգէս-Գիսակ 160, Լոյս 85. 5, Վարդապետ 22, Ոսկերիչներու Միութիւն 22, Սեւ-քար 33, Ակունք 35, Թաթուլ-Արամ 180, Բրիտանիա 19. 5, Արաքս 121. 5, Սահմանադրութիւն Միութիւն 38, Պղնձագործներու Միութիւն 5. 75, Նալճիններու Միութիւն 8, Պողպատ 64, Փայլակ 32, Արամ-Թաթուլ 45, Բրիտանիա 19. 5, Նալճիններու Միութիւն 8, Արաքս 76, Վարդապետ 24, Բարեկէն-Սիւնի 120, Միաճիններու Միութիւն 10, Պղնձագործներու Միութիւն 2. 75, Հ. Բանդ 103, Ակունք 27, Կոռուի 72, Արամ-Թաթուլ 45, Բրիտանիա 19. 5, Խու 19. 5, Թորգոմ Ազատ 48, Աւիւն 52, Կոռուի 60. 5, Վիշապաշուն 72. 5, Վարդապետ 24, Արաքս 57, Լոյս 60, Սեւ-քար 51, Արծիւ 200, Եամիուր 101, Ժառ Մահացու 195, Աշոտ-Թաթուլ 96, Փայլակ 96, Թորգոմի Ազատ երեք անգամէն 131, Արմատ 7. 5, Բրիտանիա 19. 5, Դերձակներու Միութիւն 50 դր2:

Բ ա Ր Ժ Ր Ե Ր Դ Ի Կենդրոնական Կոմիտէի շրջան. — Հետեւեալ խումբերէն՝ Սմբատ Բագրատունի 18, Արաքս 70. 5, Եառաւիղ 61. 5, Կայծակ 42, Հրատ 27, Կայծակ 77, Դոնիք 30, Սասուն 39, Ժայռ 24, Կարկուտ 30, Մկրատ 54, Վահան 54, Մարդասէր 60, Ժոնդ գիւղի Գանձապահ Խորխոռունիէն 307. 5, Խու 230, Բերդ գիւղի Ժերուկ Եւ Բզնունի 500, Որսող Ենթակոմիտէի Արշաւան, Բրակ Եւ Սաղ գիւղերու խմբերէն 1358, Ժովասարի հին անդամավճար 52, Ս. Մանո 19, Արմն գիւղի 4 խմբերէն հին անդամավճար 206, Արմն Եւ Արմատ 119, Կտրող 20, Ար. Սիւ. 19 դր2:

Ճ ա ռ ա զ ա յ թ Ենթակոմիտէն՝ 1908 յոյնիսերէն 1909 մարտ. — Հետեւեալ խումբերէն՝ Խաչապետ Թորգոմ 20 դր2, Կրակ 9, Կարմրաւորի Բէնճալ 11, Կայծ 12, Զերմուկ 29, Ժովասար 12, Կարմիր քարի Բարեկէն-Սիւնի 16, Երկաթ-Ժովասար 18. 5, Սասուն 6, Որսող 27, Բարաբուրի Բանուր 18, Խու 12, Զերմուկի Աւազակ 13, Կարմիր քարի Զէյթուն 20, Անտիկ 11, Մկրատ 16, Միութիւն 8, Բարաբուրի Անիւծ 16, Խու 9, Կապան գիւղի մէկ խմբէն 9, Կարմրուրի Բէնճալ 12, Կայծ 13, Կրակ 13, Բարաբուրի Անիւծ 9, Բանուր 10, Կարմիր քարի Պաշ-Եսէն 13, Զէյթուն 16, Անտիկ 11, Մկրատ 16, Միութիւն 8, Զերմուկի Արարատ 16, Խու 16. 25, Ռազմիկ 16. 25, Խու 18, Խու 18, Երկաթ 16. 75, Խու 16. 75, Մօսին 16, Խու 16, Կապանի Բաշ 14, Զերմուկի Ռազմիկ 16, Կապանի Բաշ 14, Կարմրաւորի Կայծ 12, Զերմուկի Երկաթ 7, Կարմրուրի Կրակ 9, Զերմուկի Աւազակ 12. 5, Կարմրուրի Ռազմիկ 7. 5, Փայլակ 11. 5, Բէնճալ 14, Կարմիր քարի Բարեկէն-Սիւնի 10, Զէյթուն 8, Անտիկ 8. 5, Մկրատ 4, Միութիւն 9. 5, Բարեկէն-Սիւնի 10, Զէյթուն 8, Սասունի 8. 5, Մկրատ 4, Միութիւն 9. 5, Կարմրուրի Կայծ 13, Կրակ 9, Բէնճալ 14, Ռազմիկ 8. 5, Փայլակ 11. 5, Բարաբուրի Բանուր 11, Անիւծ 9, Զերմուկի Աւազակ 12. 5, Ռազմիկ 10, Արարատ 13, Երկաթ 7, Մօսին 10, Կարմիր քարի Բարեկէն-Սիւնի 10, Զէյթուն 8, Անտիկ 8. 5, Մկրատ 4, Միութիւն 8. 5, Բարաբուրի Բանուր 11, Անիւծ 9, Զերմուկի Աւազակ 12. 5, Կարմրուրի Փայլակ 12, Կայծ 13, Կրակ 9, Բէնճալ 11, Ռազմիկ 8, Զերմուկի Ռազմիկ 10, Արարատ 13, Մօսին 10 դր2:

Ծովափի Կ.

Բ ե Ր Դ Ի Կոմիտէն՝ 1908 սեպտեմբեր 1-էն 1910 մարտ 15. — Հետեւեալ գիւղերէն Եւ խումբերէն՝ Առուակ 471 դր., Արարատ 72, Աղուանիս 57, Անիւծ 221. 50, Ապահունի 160, Արաքս 50. 75, Արծիւ Լ. 90, Բ. 81, Արծիւ 20, Ալամունիկ 30, Արամանի 40. 50, Ալեքս 100, Արմունի 72, Արծիւ (Լքառիչ գիւղ) 19, Դիակ 56, Դիակաւորներէ 625, Զէյթուն 98, Իւրուկ 413. 50, Կայծակ Լ. 383. 50, Բ. 237, Գ. 20, Գ. 202, Հրատ 237, Հիմնադիր 212, Մարիիկ Գէր 133, Մեղու 193, Մասիս 126, Ներկայացումէ 425, Պարթապ 137. 50, Ռուրի 302, Սասուն 197. 50, Սասուն Բ. 67. 50, Վարապ 251, Վեպ 108, Վրէժ 65, Վրիժառու 50. 50, Վասպուրական 157, Ուխտեալ 182 դր.: Գումար 6364 դր. 50 փարա:

Պ ա Ր Ի Ս Ա Յ գիւղի Ներկայացումէն՝ 1908 հոկտեմբեր 1-էն 31 մարտ 1910. — Հետեւեալ խումբերէն՝ Անիւծ 338 դր., Հրայր 333. 10, Պեթ 308, Վահան 294, Սարսափ 203, Սարափիչ 186, Արծիւ 74, Սերոբ 32, Երկաթ 14, X X 66, Մի կնոջէ 4. 30, Զէմէեան 19, Կարակէօգեան 19, Երեմ անձերէ 31. 30 դր.: Գումար 1922 դր. 30 փարա:

Բ ե Ր Դ Ի Կարմիր-Խաչ՝ Սկսած 1910 մարտից. — Ա. Վ. 10. 10 դր., Ո. Մարկ. 13. 10, Ա. Թով. 11, Պ. Բէլիք 27, Ե. Մար. 12, Ա. Նալ. 8, Լուսիկ 31, Աղ. Վ. 2, Ա. Վ. 15. 30, Արա. Գան. 17, Ն. Պ. Զար.

Ա Ջ Գ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Տխուր պարտաւորութիւն ունինք ծանուցանելու հայ հասարակութեանը հետեւեալ փաստը.

Նոյն աղբիւրից, որի աւած փաստաթղթերի շնորհիւ վերջին ժամանակներս մերկացրած են Ռուսաստանում մի շարք կարեւոր լրտեսներ, մատնիչներ ու աժան-պրօֆօկատօրներ — Ժ ու շ ե ն կ ո, Բ ա տ ու շ ա ն ս կ ի, Կ ա պ լ ի ն ս կ ի, Ռ ո զ ե ն թ եր դ և ուրիշներ—նոյն այդ աղբիւրից Հ. Յ. Գ. պատշաճ մարմինը տեղեկացել է, որ նախկին «Նոր-Գար» լրագրի խմբագրապետ, հայ հրապարակագիր

Ս Պ Ա Ն Դ Ա Ր Ս Պ Ա Ն Դ Ա Ր Է Ա Ն Ը

1904 թւի յունւար ամսից ի վեր ստանձնած է ռուս ոստիկանական գէպարտմենտի գաղտնի գործակալի պաշտօն՝ մատակարարելու համար ցարական ոստիկանութեանը տեղեկութիւններ հայ յեղափոխական շարժման մասին:

Գրւած է Սպանգար Սպանգարեանը ոստիկանական անւանացուցակում «Ամիրով» կեղծանունով. ստացել է սկզբում միանգամ հազար ռուբլու նպաստ և ապա նրան նշանակել են երկու հարիւր ռուբլու ամսաթոշակ:

Ահա մի ծանր դօկումենտ, որ չենք հրատարակում թեթեւ սրտով:

Իրողութիւնը, տարաբախտաբար, անժխտելի է և ժխտելու բոլոր փորձերը կը ջախջախին անողոք փաստագրերով:

Կան ուրիշ անուններ ևս՝ ժամանակին մատնելու հանրային ուշադրութեանը: Զգուշացնում ենք բոլոր նրանց, որոնք ներկայ սե օրերում վատաբար գործիք են լինում մի հզօր ու քստմեղի բռնակալութեան և ձգտում են այս կամ այն եղանակով—ոմանք գաղտնի, ուրիշները հաղիւ հազ վարագուրած—փնասելու հայ ժողովրդական կազմակերպութեանը: Թո՛ղ լաւ իմանան հայկական բոլոր գիմակաւորւած մանր ու խոշոր Յուդաները, որ ոչինչ չի վրիպում այդ կազմակերպութեան աչքերից և որ դաւաճան չահատակութիւնների հանդէպ վաղ թէ ուշ պիտի ծառանայ յեղափոխական անողոք չէմէղիդան:

«Դ Ր Օ Շ Ա Կ»

25, Սիր. Ժամ 15, եր. Գալ. 25, Ա. Բա. 54 Ա. Վարդ. 16, Ն. Կարա. 19, Փ. Թոր. 23, Ա. Տ. Մրապ. 6, օր. Վ. Գուլ. 21, Նար. Գար. 16, Էրմ. Գալի. 14, Փէր. Էրս. 51, Թ. Ս. Պերա. 28, Պ. Բէշի. 42, 30, Լ. Թաւ. 22, Տ. Օղ. 12, Ս. Ժամ. 17, Գ. Նալ. 10, Ա. Թան. 12, Թ. Վ. 21, օր. Վ. Գուլ. 18, 20, Թ. Արապ. 20, Թ. Ս. Պերա. 4, 30, Գ. Սիւսոն 10, Թ. Ա. Վ. 20, երմ. Թոր. 32, Խղա. Տի. 21, Ոսկի. Մ. 7, Շ. Մարկ. 14, Գ. Նալ. 13, Լիւ. Այնա 24, Վ. Մ. Հիւս 19, Ա. Ի. Թով. 19, Փ. Ա. Թոր. 5, Մ. Ե. Գոյ. 19, Ե. Յ. Պէլ. 19, Ե. Ա. Գալ. 5, Թ. Ա. Վ. 3 Շ. Թաւ. 4-30, Ն. Պ. Ղաշի. 9, 20, Շ. Ն. Մար. 2, 20, Ա. Մ. Գաւար 5, Տ. Ն. Օղան 4, 30 դր.:

Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ա Կ Ա Ն

Տ Ե Ր Ր Օ Ր

Հ. Յ. Գ. Մրգաստանի Կ. Կօմիտէի որոշումով՝ տերթօրի է եմթարկւած Ուսումնական ժամգարմենիայի բոտմիստը Բ ու Ր զ ա ց կ ի:

Տերթօրիստները ազատ են:

Հ. Յ. Դաշմակցութեան 20-ամեակի առիթով, «Դրօշակի» խմբագրութիւնը մտադիր է հրատարակել Պ ա տ կ ի ր ա զ ա ը դ Ա լ լ ու մ հայ ժողովրդական դատի հարիւրաւոր մահատակների մկարմերով ու հակիրճ կենդանագիրներով: Դործը ըստ կարելոյն լրիւ, ամբողջ և հրապուրիչ դարձնելու համար, յամծմարարում է ընկերներին, ընթերցողներին, մահատակների մեծաւորներին՝ ղրկել լուսամկարմեր և կենսագրական ճշգրիտ տեղեկութիւններ բոլոր այն դէմքերի մասին—մշանաւոր կամ անծանօթ—որոնք ընկել են 20 — 25 տարուց ի վեր հայոց ազատութեան մարտադաշտերում, Թիւրքիա, Կովկաս և Պարսկաստան:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ՄԻՔ. ՎԱՐԱՆԻՔԱՆԻ

Վերածննդ Հայրենիքը

Ե Ի

Մեր Դերը

(«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ԱՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Գիրքը բաղկացած է երկու մասից, 408 երեսներից: Ի մասը նւիրւած է վերջին քսան տարւայ անցքերի հակիրճ վերլուծումին, հայ ազատագրական շարժման և նրա նահապետներին:

II մասը ամփոփում է «Դաշնակցութեան» ծրագրային դաւանանքի և տակտիկային խնդիրներին:

Գրքին կցւած են մի շարք նահատակների պատկերներ:

Գինը է 3 ՖրԱԿ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ 1 Ռ. 50 Կ:

Հասցէ՝ Red. du «DROSCHAK», Genève (Suisse):